



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16293



Բ. Գ. Կ. Բ. ՃՈՒՇԱԿԵՆՈՐ

# ՅՐԱԶԳԱՅԻՆ — ԿԱՌԱՎԱՐՈՒԹ

ՀՐԱՄԱՅՈՅԻ ՅՈՒ. ՀԽՈ-ԾԻ ՅՈՒՆԻՉՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԽՈ-ԾԻ

19566

ԽՍՀՄ Պրոլետարիական բոլոր յերկրների, միացեք! ԽՍՀՄ

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ» Ե  
28 Նոյեմբերի 1923 թ.  
Մասկա

355

Ի-11

այ

Բ. Գ. Կ. Բ.

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՀՐԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄԱՍՆ I-Ն

ՀՐԱԶԳԻԳ ԶԵՆՔ

VI ՀՐԱՑԱՆԱՅԻՆ ՑԵՎ ԶԵՌՔԻ ՆՈՆԱԿՆԵՐ

2010

ՅԵՐԵՎԱՆԻ

№ 33

1929

ՀԱՅԻ. ՀՐԱԶԳԻԳ ԴԻՎԻԶ. ՔՈՂՅՈՒՆԻ ԽՄԲ. ՀՔԸ. ՄԱՅ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարմիր բանակն իր տրամադրության  
տակ ունի, դեռևս համաշխարհային իմպերիա-  
լիստական պատերազմի շրջանում պատ-  
րաստած, ոռւսական և ոտարերկրյա զա-  
նազան տիպարների և նմուշների հրացա-  
նային և ձեռքի նոնակների բավականաչափ  
պաշար:

Այդ պաշարը քննելով և փորձելով՝  
զորքերը զորացարժային մարտում զինելու  
համար՝ իբրև հիմնական և լավագույն տի-  
պարներ ընդունվել են՝

Դյակոնովի սխտեմի հրացանային նըռ-  
նակը:

**1914** Թվի տիպարի ձեռքի նոնակը:  
Միւ (անգլիական) սիստեմի ձեռքի  
նոնակը:

Մաներիզ

Նովիցելու յեվ Փետրորովի սխատեմի ծանր  
ծեռքի և 1914 թվի պիտարի ծեռքի նընակ-

Ները՝ լքացուցիչ լիցքովի թողնված են իբրև  
մարտական և զորեղ Փուգասային գործո-  
ղությամբ ոժաված ավերիչ միջոց, իսկ  
1917 թվի տիպարի ձեռքի քիմիական նըո-  
նակը՝ իբրև դիբրային մարտի գենք. մնա-  
ցած բոլոր տեսակները, փորոնք այս կանո-  
նագրքում նկարագրված են, պիտանի յէն  
համարված միայն զորքերի վարժական  
գործնության համար արագադրելի:

## I

## ԴՅԱԿՈՆՈՎԻ ՍԻՍՏԵՄԻ ՀՐԱՑԱ- ՆԱՅԻՆ ՆՌՆԱԿ ՆՌՆԱԿԻՄԱՐՏԱԿԱՆՀԱՏՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԸ

1. Նոնակը հանդիսանում է մի փոքրիկ  
պայթուցիկ արկ, վոր հարմարեցրած և վո-  
րոշ հեռավորության վրա, ողի մեջ, պայ-  
թելու համար և վորը կոչված է հարվածե-  
լու հակառակորդի կենդանի ուժը բեկորնե-  
րով:

2. Նոնակը նետվում է սովորաբար  
հրացանով, մարտական փամփուշտի ուժով:  
Զիզի համար նոնակը տեղավորվում է  
հասուկ խողովակի մեջ, վորը հազցվում է  
սվինի փոխարեն, հրացանի փողի ծայրին,  
և վորը կոչվում է հրասանդիկ: Հրացանը

ուղղվում ե գեպի նպատակը կվալրանտի ոգնությամբ։ Զիդ կատարելիս, գնդակը թռչում ե նոնակի կենտրոնական անցքով, իսկ նրա յետեից յեկող վառողի գազերը վառում են և գուրս են նետում նոնակը։

3. Մարտում հրացանային նոնակներով գործելը հանձնվում է հատուկ նշանակված հրացանաձիգների՝ նոնաձիգների։ Հրացգության ժամանակ նոնաձիգը կարիք ե զգում մի ոգնականի աջակցության (նույնը և նոնակակիր)։

4. Հրացանային նոնակների հատուկ կոչումն ե՝ գագաթնահար կրակով հարվածել հակառակորդի կենդանի ուժի կուտակումները ծածկություներում և մեռյալ տարածությունների վրա և ընդհանրապես ոգնել հրացանաձիգներին, ավտոմատաձիգներին և գնդացրաձիգներին հակառակորդի կրակը ձնշելու, նրա դիմադրության հանգույցները փոխնացնելու, նրան մոտեցող ոժանետակներին հարվածելու և այլն։

Կենտրոնացած նոնակային փոթորկա-

յին կրակը, բռնամարտի սպառնալիքը զուգակցությամբ, կարող ե հակառակորդի շարքերում խուճապ առաջացնել և վճռական գործողություն ունենալ։

5. Նոնակի քաշն ե 300 գր. (մոտ  $\frac{3}{4}$  ֆունտ): Նրա թուիչքի հասողությունը 120—300 մետր<sup>\*</sup>) (175—450 քայլ): Բեկորները թռչում են ամեն կողմ մինչև 150 մետր (մինչև 200 քայլ) պայթյունի տեղից։ Նոնակի հետագծի ուղղորդությունը թույլ ե տալիս նետելու նոնակը ծածկարանների յետեից, ինչպես և մեր գորքերի գլուխ վրայով։

## ՆՌՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6. Նոնակը, ընդհանուր առմամբ, ունի յերկարավուն ձև սուր գլխով։ Ներքեցի նոնակը ծածկված ե արճճե թասակով, վորը պահպանում ե նոնակի հեռակայական մա-


\*) Ամենավերջին պատրաստած նոնակներն ունեն թուիչքի յերկու անգամ ավելի մեծ հասողություն։

սը խոնավությունից և գործադրությունից  
անմիջապես առաջ պոկ-  
վում ե:

7. Նռնակի հիմքն ե  
կազմում ձուլե (թուղի)  
սարմինը, վոր լցված ե  
պայմուցիկ լիցքով:

8. Մարմի մեջ մըտ-  
ցրած են՝ կենտրոնական  
փողակը\*) գնդակի անց-  
նելու համար և մատնո-  
ցը՝ գետոնատորը (պայ-  
թուցիչը) և հապաղիչը  
(գանդաղ կերպով այր-  
վող բաղադրություն)  
տեղափորելու համար:

9. Մարմինը յետեկից  
ծածկված ե կրկնահա-  
տակով:



Նկար 1. Հրացանային  
նոսակ.

\*) Ամենավերջին պատրաստած նոնակ-  
ներն ունեն ներքին կափույք, վորը գնդակի անց-  
նելուց հետո ծածկում ե կենտրոնական փողակի  
յետեկի բացվածքը: Այս պվելացրեց նոնակի  
թոփչքի սկզբնական արագությունն ու հասողու-  
թյունը:

10. Կրկնահատակի յետեկում կենտրո-  
նական փողակին հագցըրած ե միացնող ա-  
կանոցը յերկու մասեկով, վերին և ստորին,  
իսկ նրա վրա հեռակայական փալակը, վորը  
ներքեից ծածկված ե ուսոյուրատորով և  
ամրացըրած ե սեղմիչի մասեկով:

### ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11. Մարմինը թափվում ե թուշից:  
Պատերի հաստությունն է  $2 - 2\frac{1}{2}$  միլիմետր:  
Մարմինը ներքեից բաց ե, վերևից սրա-  
ծայր և գլխին ունի կոռու անցք կենտրոնա-  
կան փողակի պսակի համար:


12. Կրկնահատակը յերկաթե սկավա-  
ռակ ե ծալած յեզերքով և պտուտակված ե  
կենտրոնական փողակի վրա: Կրկնահատակն  
ունի՝ 1) պտուտակածն բացվածք՝ կենտրո-  
նական փողակի համար: 2) նույնպիսի  
պտուտակածն բացվածքը լիցքը լեցնելու  
համար, վորը փակվում ե պտուտակածն  
մետաղե խցանով: 3) դեպի դետոնատորի  
հապաղիչի մատնոյը տանող անցք և 4) 3

վարող յելուն, վորոնք  
համապատասխանում են  
հրասանդիկի ակոսներին:

13) Կենտրոնական փո-  
ղակը ծայրերից մեկում  
ունի պատկ (հաստմաս),  
վորը պահում է նրան  
մարմինի առաջավոր մա-  
սում, պատկը դրսից ճա-  
խարակած է նոնակի  
գլխի ձևով:

Փողակի մյուս ծայրը  
դրսից ունի պատուտա-  
կաձև ակոսներ, վրանց  
վրա ամբացված ե կրկ-  
նահատակը, ինչպես և  
միացնող ականոցը, հե-  
ռակայական փողակի մա-  
սերի հետ միասին, ոք-  
տյուրատորը յիշ սեղմիչ  
մասները, վորը հիշյալ բո-  
լոր մասերը սեղմում ե  
կրկնահատակին:

10



14. Մատնոցը ծառայում է դետոնա-  
տորի և հապաղիչի տեղափորման համար:  
Նա թիթեղից ե և իր բաց մասով զողած  
է կրկնահատակի անցքին, իսկ փակ ծայ-  
րով մտնում է լիցքի մեջ:

15. Պայթուցիկ լիցքը բաղկացած է  
փշտող պայթուցիկ նյութից (ամմոնալ և  
այլն) և լցնում է մարմին սակերեսի, կրկ-  
նահատակի և կենտրոնական փողակի միջև  
գտնվող ամբողջ տարածությունը: Պայթուա  
և միայն ճայթիչի (դետոնատորի) վայթյունից:

16. Միացնող ականոցը ծառայում է  
միացնելու և ամբացնելու կենտրոնական  
փողակի ստորին մասում ափսեն, հեռակա-  
յական մասը յիշ ոքտյուրատորը: Ականոցը  
հանդիսանում է մի կարճ արուրե փողակ,  
վորը պատ կերպով հագցված է կենտրո-  
նական փողակի վրա:

Ծայրերին ունի պտուտակաձև ակոս-  
ներ վերին և ստորին մասնեկների համար:  
Ստորին ակոսները սահմանափակվում են  
ականոցի մարմինի կողմից մի վերածուլիկով,

11

վորը ծառայում ե իբր հենարան ոքտյունատուրի համար: Վերին ալյումինե մանեկը ծառայում ե ափսեն ականոցի վրա ամբացնելու համար: Արույրե ստորին մանեկը ծառայում ե իբրև հենարան յերկաթե սեղմիչ մանեկի համար:

17. Հեռակայականը փողակը ծառայում ե նոնակը ձիգի տեղից վորոշ հեռավորության վրա պայթեցնելու համար: Բաղկացած ե՝ ափսեյից, հեռակայական մասից, հակաղիչից յեվ դետոնատորից:

18. Ափսեն հանդիսանում ե մի ապումինե սկավառակ, մոտ 8 միլիմետր հաստությամբ: Սկավառակի կողքի մակերեսութի վրայով անցնում ե ողաճե մի մատնեք, վորը տարբերում ե ափսեն հեռակայական մասից (կարեոր ե փողակը հաստելիս):

Ափսեյի վերին յեզրը մի փոքր շեղ ե, այնպես զոր ափսեն կրկնահատակի վրա դնելիս վերջինիս մի փոքր բարձրացած յեզրը սեղմ կերպով ընդգրկում են ափսեյի վերին մասը (մինչև ողակածե մատնեքի

յեզրը): Ափսեյի ստորին յեզրը նույնպես մի փոքր վեր ե բարձրացած և ներկայացնում ե մի հարթ փոքր ափսե, վորի մեջ տեղավորվում ե հեռակայական սկավառակի վերին մասը:

Ափսեն ունի յերկու միջանցիկ կոր անցք: Լայն կենտրոնական անցքը ծառայում ե ափսեն միացնող ականոցի վրա հազցնելու համար և ունի մի աստիճան, վոր ծառայում ե իբրև հենարան միացնող ականոցի վերին մանեկի համար: Նեղ կողքի անցքն ունի պառւտակածե ակոսներ: անցքը տեղավորված ե մատնոցի դիմաց և ծառայում ե փողակը հապաղիչի և դետոնատորի հետ միասին նրա մեջ ամբացնելու համար:

Ափսեյի արտաքին մակերեսույթի վրա, այս նեղ անցքի դիմաց, գտնվում ե ցուցիչ խաղը, հեռակայական սկավակակի համապատասխան բաժանումը դնելու համար:

19. Հեռակայական մասը (սկավառակը) ծառայում ե փողակը հաստելու վորոշ հեռակայության վրա պայթեցնելու համար:

Այդ մասը մի ալյումինե սկավառակ ե  
5 միլիմետր հաստությամբ: Ունի 2 միջան-  
ցիկ անցք՝ լայն կետրոնական՝ միացնող  
ականոցի վրա հագցնելու համար և նեղ  
կողքի՝ հեռակայական բաղադրությունը ձի-  
գի ժամանակ վառողի դյուրավառ գազե-  
րով կպցնելու համար: Սկավառակի վերին  
կողմի վրա կա մի ողակածեվ ակոսիկ հե-  
ռակայական բաղադրությունը տեղափորելու  
համար: Այդ ակոսիկը սկսվում է հրածակից,  
ընթանում ե շրջանակաձև և վերջանում ե  
նույն հրածակին 6 միլիմետր չհասած: Ակո-  
սիկի մեջ մամլած ե վառողի փոշին: Այդ  
փոշին հրածակի միջով դուրս ե գալիս սկա-  
վառակի մյուս յերեսը:

Սկավառակի վերին կողը մի փոքր թեք  
կտրած ե, վորի շնորհիվ սեղմ կերպով կըպ-  
չում ե ափսեյին և ընդգրկում ե նրա  
վեր բարձրացրած յեղով:

Հեռակայական սկավառակի կողքի մա-  
կերևութիվ վրա կան բաժանմունքներ 2—12  
թվանշաններով: Մեղմիչ մանեկը թուլաց-

նելուց հետո, հեռակայական սկավառակի  
մի պարզ պտույտով այս բաժանմունքների  
վրա հաստում են ափսեյի ցուցիչը, վոր-  
պեսզի հեռակայական բաղադրության այլ-  
ման ժամանակը համապատասխանի հրած-  
գության հեռակայությանը:

12 և 2 թվանշանների միջև դրված ե  
Յ տառը, վորը տեղափորված ե սկավառա-  
կի այն տեղի դիմաց, ուր հեռակայական  
բաղադրության ողակն ընդհարվում է: Փո-  
ղակն այդ բաժանմունքի վրա հաստե-  
լուց հետո, պայցթում չի կարող լինել: Փո-  
ղակը հաստում են այս բաժանմունքի  
վրա, յերբ նոնակը փոխադրում են սայլով  
կամ ձեռքով:

20. Հապաղիչն ու կետոնատորը տեղա-  
փորված են մի ընդհանուր պղնձե փողակի  
մեջ, վորը մի ծայրով պտուտակվում ե  
ափսեյի անցքի մեջ, մյուսով մանում ե  
կրկնահատակի մատնոցի մեջ: Դետոնատո-  
րը, շառաչուկ սնդիկի մի փոքրիկ լիցքի ձե-  
գով, տեղափորված ե փողակի հատակում,

իսկ հապաղիչը, վառողի փոշու մի այսունակի ձևով ձգվում է շառաչուկ սնդիկից մինչև ափսեյի ստորին շուրթը։ Այսպիսով հապաղիչն անմիջապես կպչում է հեռակայական բաղադրությանը, վորից բռնկվում եւ ապա կը հազորդում է շառաչուկ սնդիկին։

Հապաղիչն այսպես է կոչվում, վորով հետև հեռակայական բաղադրության նման, արագ չեւ վառվում և հապաղեցնում է նըռնակի պայթյունը։ Հեռակայական փողակը 2 խաղի վրա գնելիս, հապաղիչը կանգնում է ուղիղ հրածակի դիմաց, սակայն պայթյունը ձիգին անմիջապես չի հետևում, այլ միայն այն ժամանակի եւ տեղի ունենում, յերբ նոնակը թռչում է 125 մետր (175 քայլ) հեռավորություն։

21. Որոյուրասորը խոչընդուա և հանդիսանում վառողի գաղերը հրասանդիկի պատի և նոնակի միջև թափանցելուն։ Որոյուրասորը մի բարակ յերկաթե բոլորակ և ուղանկյուն ձևով ծռված յեղերքով և յեր-

կու կլոր ծակով։ Լայն կենտրոնական ծակովնա հագցրած եւ միացնող ականոցի վրա, հեռակայական սկավառակից ներքեւ այդ ականոցի համար իբրև հենարան ծառայող վերածուկիկի տակին։ Նեղ կողքի անցքն ընկնում է հեռակայական սկավառակի հրածակի դիմաց, վորին նաև ամրացված եւ որտուրատորի անցքի յետ ծալված յեղերքով։ Այս անցքի միջով եւ կատարվում հեռակայական բաղադրության բոցավառումը գաղերով։

Ամրացումն անհրաժեշտ ե, վորպեսզի հեռակայական սկավառակը դարձնելիս որոտուրատորը նրա հետ միասին պտտվի և հրածակը բաց մնա։ Այդ ամրացված տեղը որտուրատորի կողմից լցնում են մասաբայով և մագաղաթ կպցնում, վորպեսզի վառողափոշին չխոնավանա։

22. Սեղմիչ մանեկը կլոր ե, յերկաթե, յերկու ունկ ունի մատներով պտտելու հարմարության համար։ Մանեկը պտուտակվում է կենտրոնական փողակի ստորին



ծայրին։ Նրան իբրև հենարան և ծառայում միացնող ականցի ստորին մանեկը։ Սեղմիչ մանեկը պատուտակվելիս հենց այդ մանեկին և հուպ տալիս, այսպիսով հիշյալ մասերը սեղմելով կրկնահատակին։

Մանեկը ներս և պատուտակվում դեպի ինքը պատվելով, իսկ դուրս և պատուտակվում հակառակ կողմը պատվելով։

23. Զիգի մոմենտին վառողի գազերը, վորոնք գնդակի յետից դուրս են ժայթքում հրացանի փողից հրասանդիկի ներսը, ոբայցուրատորի և հեռակայական սկավառակի հրածակի միջով կացնում են նոնակի հեռակայական բաղադրությունը։ Միաժամանակ այդ գազերը դուրս են նետունոնակը հրասանդիկից ակոների վ նախ վառվում և միայն հեռակայական բաղադրությունը։ Յերբ կրակը համուռմ և հապաղիչի դիմաց դրած ծակին, բռնկվում են նաև հապաղիչը։ Յերբ նա յել և այլ գում, պայթում և գետոնատորը և իսկույն ինքը նոնակին ողի մեջ։

Լավագույն հարվածելիությունը ստացվում է այն ժամանակ, յերբ նոնակը պայթում է նպատակից 2—5 մետր (1—3 սահեն) բարձրության վրա։

### ՀՐԱՄԱՆԴԻԿ

24. Հրասանդիկը բաղկացած ե 3 մասից՝ 1) պողպատե զլանաձեվ փողից, 2) միացնող թասից յեվ 3) ճոփից։

25. Փողը ուղղություն ե տալիս նըստակի թռիչքին և մի պողպատե զլան և, վորի յերկարությունն ե 23 սմ., արտմաշափը 3,9 սմ., պատերի հաստությունն ե 3 մմ.։ Նրա ներքին մակերեսույթի վրա կած ակոս, վորոնք հրասանդիկի մեջ մոտ 1/4 պատույտ են անում։ Այդ ակոսները նոնակին պատուտակածե շարժում են հաղորդում և հետեւաբար կայունություն թռիչքի ժամանակ։

26. Միացնող թասը պողպատից ե պատրաստած և ծառայում ե լայն նեղ ճտին

ամրացնելու համար: Ներսից, նրա յերկու ծայրն ել պտուտակավոր են:


Փողը թասի հետ պինդ պտուտակում են գործարանում: Զորամասերում այդ մասերը քանդելը չի թույլատրվում և հարկավոր ել չե:

27. Ծիտը ծառայում ե հրասանդիլը հրացանի փողի ծայրին ամրացնելու համար: Դա մի պողպատե փողակ ե, վորի ներքին արամագիծը համապատասխանում ե հրացանի փողաբերնի շուրթի հաստությանը: Ճիտն ունի՝ ա) սարին մասում, կողի մակերևույթի վրա ծնկաձև կտրուն հատիկի հիմքի անցնելու համար (ինչպես սվինի փողակի վրա). բ) վերին ծայրում՝ պտուտակաձև ակոս միացնող թասի մեջ ներս պտուտակելու համար:

Ճիտը կարող ե գուրս պտուտակվել միացնող թասից: Այդ կարող ե պետք գալ հրասանդիլը հրացանի փողի ծայրին ավելի պինդ ամրացնելու համար, վորովհետև հատուկ անրիկ չկա:

## ԿՎԱԴՐԱՆՏ

28. Կվադրանտը բաղկացած է՝ 1) պահունակից, 2) նիշից ամրացնող պտուտակով և 3) տրամալար-ցուցիչից:



Նկար 3. Կվադրանտ.

29. Պահունակիր ցինկով պատած յերկաթե մի թիթեղ ե, փորի վերին յեզրը ծալած ե, իսկ ստորինը կլոր կարգած: Վերին յեզրն այնպես ե ծալած, փոք կարող ե ամուռ ընդգրկել հրացանը վերեից ագուստի ստորին ողի մոտ:

30. Պահունակի վերին յեզրին ծխուռ վրա ամրացրած ե նիշը, ուղղանկյուն յերկաթի թիթեղի ձևով, փորի ստորին ծայրում ամրացրած ե պտուտակը: Այս պտուտակի դիմաց, պահունակի հաստացրած պատում, կա մի պտուտակավոր ակ, փորի մեջ և նա պտուտակվում ե: Այսպիսով կվագրանաը ամրացվում ե հրացանի վրա:

31. Պահունակի շրջանաձև յեզրին յերկուշարք բաժանումներ են քաշած. անմիջապես յեզրին քաշած բաժանումները (խազերը) ցույց են տալիս հեռավորությունը, իսկ թվերի մյուս շարքը ցույց ե տալիս հեռավորությանը համապատասխանող հեռակայական սկավառակի հաստումը:

32. Անմիջապես պահունակի վրա կախ-

ված ե տրամալար-ցուցիչը առանցքի վրացուցիչը հրացանի փողաբերանը բարձրացնելիս կամ իջեցնելիս (հրացանի կոթը դեմ ե արած գետնին) ցույց ե տալիս, թե ինչ հեռավորության ե համապատասխանում հրացանի այս կամ այն թեքումը: Հեռավորությունները ցույց ե տված քայլերով:

ՆՄՆԱԿՆԵՐԻ ՑԵՎ ՀՐԱՍՍԱՆԴԻԿՆԵՐԻ ԽՅԱ-  
ՆՈՒՄԸ ՑԵՎ ԶՆԱՌԻԹՅՈՒՆՆԵՐ

33. Նոնակները զորամասում ստացվում են փայտե արկղների մեջ խցանված, ամեն մի արկղում 4 նեղ յերկաթե տուփ, յուրաքանչյուր տուփի մեջ 30 նոնակ: Հեռակայական փողակները ներս են պտուտակված, Յ խազի վրա յեն զրված և ծած - ված են արճճե թասակներով: Տուփերը հերմետիկ կերպով խցանված են և ժապավեններ ունեն ուսընդանութ կրելու համար: Բացի նոնակներով լիքը 4 տուփից, յուրաքանչյուր արկղի մեջ դարսվում էն, 1) մեկ վաղբանատ, 2) մեկ պայուսակ և նոնակ

կրելու համար, 3) մեկ պայուսակ հրասան-  
դիկը կրելու համար, այս պայուսակի մեջ,  
հարկ յեղած դեպքում, հրասանդիկի հետ  
միասին կարելի յե գնել մի զույգ նոնակ:

34. Նոնակները զննելիս, արձնե թա-  
սակները պոկվում են և ուշադրություն ե-  
դաբձվում.

1) Ափսեյի, հեռակայական փողակի և  
ոբայուրատորի գրության վրա. յեթե այդ  
մասերը ծածկված են ժանդով, նոնակը խո-  
տանվում է,

2) Սեղմիչ մանեկի աշխատելուն. նա  
պետք ե ազատ ամրացվի և թուլացվի:  
Յեթե այդ դժվարությամբ ե կատարվում,  
պետք ե. սանեկի և կենտրոնական փողակի  
ծայրը յուղել:

3) Հեռակայական փողակի աշխատելուն.  
նա պետք ե ազատ պտտվի հաստելու համար:

4) Կենտրոնական փողակի գրության  
վրա. նա բնավ չպետք ե ներսում ծովածք-  
ներ և ուժեղ ժանդ ունինա—դա կատա-  
ջացնի նոնակի անխուսափելի պայթյուն

հրասանդիկի մեջ։ Այդպիսի փողակ ունե-  
ցող նոնակները անպայման խոտանվում են:  
Կենտրոնական փողակի ներսում թեթև  
ժանդը զգուշությամբ պետք ե մաքրել  
հանել։

Կենտրոնական փողակի սարքին լինե-  
լը հարժար ե ստուգել նրա միջովը մի սո-  
վորական գնդակ անցկացնելով։ Յեթե գըն-  
դակը բանդ ե լինում, նոնակը պետք ե  
խոտանել։

35. Հրասանդիկները զննելիս պետք ե  
ուշադրություն դարձվի նրա մասերի հար-  
դարանքի ճշտության և միացման ամրու-  
թյան վրա։ Փողը պետք ե նստած լինի  
թասի մեջ անշարժ կերպով։ Ճիտը պետք ե  
ազատ կերպով դուրս պտուտակվի թասից,  
սակայն մինչե դեմ առնելը ներս պտու-  
տակվելիս նույնպես պետք ե անշարժ լի-  
նի։ Հրացանի վրա հաղցնելիս, թասը մի  
փոքր դուրս ե պտուտակվում ճիտից, իսկ  
հետո ամրացնելու համար նորից ներս ե  
պտուտակվում մինչե դեմ առնելը։

Յեթե հրասանդիկը հրացանի վրա  
շարժվում է, կենտրոնական փողակի անց-  
քը չի կազմի հրացանի փողանցքի ուղիղ  
շարունակությունը. գնդակը կարող է խը-  
փել նոնակին և պայթեյնել նոնակը հրա-  
սանդիկի մեջ:

II

## 1914 թվի ՏԻՊԱՐԻ ԶԵՌՈՒԹԻ ՆՈՒՆԱԿ

### ՆՈՒՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՏԿՈՒ- ԹՑՈՒՆՆԵՐԸ

1. Նոնակի քաշն է 700 գրամ (մոտ  
 $1\frac{3}{4}$  ֆոնտ) և ծառայում է մարտիկի  
ձեռքի ուժով, 35—40 մետր (մինչև 60  
քայլ) տարածության վրա նետելու համար։

2. Նոնակի պայթյունն առա և գա-  
լս նետելուց 4 վայրկյան հետո. պայթյու-  
նից ստացվում է մինչև 200 բեկոր, վո-  
րոնք պահպանում են հարվածելու ընդու-  
նակությունը վոչ ավելի, քան 6—8 մետր  
(9—12 քայլ) հեռավորության վրա պայթ-  
ման տեղից։ Այս հնարավորությունն է տա-  
լիս նոնակն ոգտագործել զրոհի շարժվե-  
լիս. նոնակը նետելով, մարտիկը կարող է

ազատ հետեւ նրան, առանց նրա բեկոր ներից հարված կը լու վտանգին յենթարկվելու:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Զարկանը ավելի հեռու յե թոչում, ուստի մարտական նըռնակներ նետելլ սովորեցնելիս, սովորողների մեծ խմբակները, պատահական վերավորումներից խուսափելու համար, պետք ե ծածկաբանի յետեւ պահել:

3. Մարտադաշտում բոլոր հրացանաձիգներին, ի լրումն հրացանների, տրվում ե նաև նոնակներ:

4. Նոնակի մարտական կոչումը համարյա նույնն ե, ինչ վոր հրացանի նոնակինը (տես վերև), այսինքն՝ ծածկված հակառակորդի կենդանի ուժը հարվածել սվինամարտից անմիջապես առաջ:

## ՆՌՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ

5. Նոնակը բաղկացած ե՝ ա) թիթեյա շիշաձև մարմնից իր կոթով, վորի մեջ

լցված ե պայմանացիկ լիցը, թ) բոցամկառող մեխանիզմից իր զարկանով և գ) նոնակը գործադրելուց անմիջապես առաջ նոնակի մեջ անցկացվող հրապատիճ-դետոնատորից (պայթուցիչից):

## ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6. Նոնակի մարմինը սպիտակ թիթեցյա մի գլան ե, 22 սանտիմետր յերկարությամբ, տրամագիծը՝  $4\frac{1}{2}$  սանտիմետր լայն մասում (հենց ինքը նոնակը) և  $2\frac{1}{2}$  սանտիմետր նեղ մասում (կոթը): Նոնակի տակը արույրից ե, Նոնակից դեպի կոթն անցնող մասը կոչվում ե պարանոց:

7. Նոնակի մարմինն ունի:

ա) Հատակի վրա՝ 1) կենտրոնական բացվածք (ձագար), վորը պատած ե արույրե մատնոցով գետոնատորը տեղը գընելու համար, 2) փաս գետոնատորի ձիտի համար ձագարից մինչեւ վաքը, 3) վերածուլիկ, գոնակն ամրացնելու համար ունե-

ցած կեռով. 4) պտավող դոնուկ ձագարի  
մեջ հրապատիճ՝ դետոնատորն ամբացնե-  
լու համար:

բ) Մարմնի, պարանոցի և կոթի կող-  
քի մակերեսույթի վրա.

1) Յերկայնակի վաք՝ բոցավառող մե-  
խանիզմը տեղափորելու համար: Այդ վաքը  
մարմնի վրա գտնված իր մասում, ծածկ-  
ված ե մարմնին կացրած (զողած) թիթե-  
շանթով: արդ թանթի մեջ կա մի յեր-  
կարափուն պատուհան հրահանի համար:  
Պարանոցի և կոթի վրա վաքը բաց ե: Հրա-  
հանի պատուհանի և պարանոցի միջև վաքի  
մեջ տեղափորված ե զարկանի կոթառը՝  
վորը մարտական դաստանակի համար իբրև  
հենարան և ծառայում: Հրահանի պատու-  
հանի և նոնակի հատակի միջև վաքում տե-  
ղափորված ե ասեղի ձագարածն ուղղիչ կո-  
թառը:

2) Խոտորնակի փորատ պահպանակի  
համար:

3) Կոթի վրա՝ բլրածն մի վերածոլիկ,


վորը ծառայում ե մարտական վոտքի ողա-  
կի համար իբրև հենարան:

8. Թիթեղյա մարմինը չի կարող հար-  
վածող բեկորներ տալ: Այս պատճառո  
մարմնի տուկը գրվում ե մի վանդակ, վորը  
բաղկացած ե միմյանց հետ միացած, յեր-  
կաթե քառակուսիներից, 1 միլիմետր հաս-  
տությամբ:

Այդ քառակուսիներն են հենց, վոր  
հարկածում են նոնակը պայթելիս:


9. Պայթուցիկ լիցը բաղկացած ե  
400 գրամ ուժեղ փշրտող պայթուցիկ  
նյութից (արոտիլ, հալած մելինիտ, ամ-  
ֆոնալ կամ ֆավյելի բաղադրություն):  
Այդ պայթուցիկ նյութով լցված ե ինչպես  
նոնակի, այնպես և կոթի ամբողջ ներսի  
խորը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վորովհետեւ կո-  
թի միջի լիցը կազմում ե մի բարակ ջեղ,  
ուստի նրա այս մասը հաճախ չի պայ-  
թում և կոթն ամբողջովին պոկվում է:



1. Նոնակի մարմինը; 2. Մարմինի հատակը; 3. Պարանոց (ձիթ); 4. Կոթ; 5. Կոթի հատակը (կարգածք); 6. Զարկան; 7. Զարկանի կոթառ; 8. Մարտական զսպանակ; 9. Հրահան; 10. Ուղիչ կոթառ; 11. Պահպանիչ բուլիք; 12. Իջակ (մարտական փոռք) յերկնիզով; 13. Մարտական փոռքի սոնակ; 14. Մարտական փառքի զսպանակ; 15. Մարտական փոռքակ; 16. Ողակի հենարան; 17. Քեկորներ; 18. Հրապանափակունատոր; 19. Փոքր հրապանափակ (պիստոն); 20. Գոնակ; 21. Հեռակայական մաս; 22. Դետոնատոր; 23. Լրացուցիչ դետոնատոր (տեղաբան կամ փոշիածե մելինիտ); 24. Պայտացիկ լիցք; 25. Բուծին:

Դրամ 4. 1914 թ. արդյունվել նոնակ.



#### Նկար 5 դետոնատոր

1. Պատիճ;
2. Գազերը դուրս գալու պատուհաններ;
3. Հրապանափակ-դետոնատորի ճիտ;
4. Սեղմվածք;
5. Մատնոց շառաչուկ սնդիկով:

10. Պայթուցիկ լիցքն այնպիսի հատկություններ ունի, վոր կարող է պայթել միայն դետոնատորից և վոչ մի այլ պատճառից: Ուստի առանց դետոնատորի սար-

բին նոնակի հետ վարվելը միանգամայն  
անվտանգ է: Վոչ միայն ցնցումները՝ այլ  
նույնիսկ նոնակը (առանց գետոնատորի)  
վառելը խարույկում պայթյուն չի տալիս  
Միայն սաստիկ ժանդուած նոնակները՝  
վորոնց լիցքը սուր հոտ և արձակում, վր-  
տանգավոր են դառնում: Այդպիսի նոնակները  
չպետք է տալ գործածության հա-  
մար, այլ պայթեցնելով վոչնչացնել:

11. Հրագատիճ-ղետնատորը նրա հա-  
մար է, վոր իր պայթյունով պայթեցնի  
նոնակի պայթուցիկ լիցքը: Հրապատիճ-  
ղետնատորը մի փողակ է, թ տառի նման  
ծուած: Փողակի կարճ մասը, ճիտը և յեր-  
կար մասի վերելի ծայրը ալյումինից ե-  
յերկար մասի շարունակությունը՝ կարմիք  
պղնձից:

12. Հրապատիճ-ղետնատորն ունի յե-  
րեք եյական մասեր՝ հրապատիճ, հեռա-  
կայական մաս և խօկական ղետնատոր:

13. Հրագատիճը (պիտոնը) գտնվում է  
փողակի կարճ մասում, զարկանը խփելիս  
տալիս և կրակի առաջին կայծը:

14. Հեռակայական մասն սկսվում ե-  
հրապատիճից, անցնում է ճիտի միջով և  
խորանում է փողակի յերկար մասի մեջ  
(մատնոց) մինչև սեղմվածքը: Հեռակայա-  
կան մասը նրա համար է, վոր բռնկվելով  
հրապատիճից, կրակը 4 վայրկյանի լնթաց-  
քում հաղորդի գետոնատորին:

15. Ժամանակամիջոցում նոնակը կա-  
րողանում է թռչել նետման հեռակայու-  
թյունը և ընկնել նպատակի մոտ: Հենց  
այստեղից ել առաջ է գալիս հեռակայական  
մաս անունը: Ամբողջ նոնակն նույնպես  
կոշիում է հեռակայական, բախական նըռ-  
նակներից տարբերելու համար, վորոնք  
պայթում են գետնին ղեպչելուց:

15. Հեռակայական մասը վերեկի մա-  
սում (ճիտում) իրենից ներկայացնում է  
հեշտ վառփող յերկուտակ մի քուղ (բուծին).  
յերկար մասում բուծինի շարունակությունը  
կազմում է վառողափոշին (մանր սև վա-  
ռող, վորը մամլած և ամրացրած և մաս-  
տիբայով): Բուծինը հաղորդում է կրակը

վառողին. վերջինս բռնկվում և տալիս ե  
բավականաչափ կրակ՝ դետոնատորը պայ-  
թեցնելու համար:

Հեռակայական մասը վառվելիս գա-  
ղերը դուրս գալու համար ճիտի յերկու-  
ծայրերում շինած են կլոր ծակեր, վորոնք  
դոցված են մաստիքայով:

16. Ինքը դետոնատորը տեղափորված  
է կարմիր պղնձի մատնոցի ներքեխ մա-  
սում: Ծառայում է լիցը պայթեցնելու  
համար, Ծառաչուկ սնդիկի մի փոքր (2  
գրամանոց) լիցը եւ Յերբ կրակը հեռա-  
կայական մասով հասնում է շառաչուկ սրն-  
դիկին, նա պայթում է և նրա պայթյու-  
նից տրաքում է նաև նոնակի ամբողջ  
լիցը:

17. Տրոտիլի և հալած մելինիտի լից-  
քերը շառաչուկ սնդիկից անմիջապես չեն  
պայթում:

Այդ լիցքերի համար գործածվում ե  
մի լրացուցիչ դետոնատոր, վորը տեղա-  
փորվում է հենց լիցքի մեջ: Տրոտիլի հա-

մար այդ կլինի տետրիլը, հալած մելինի-  
տի համար—փոշիանման մելինիտը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ծառաչուկ սնդիկը  
չափազանց վտանգավոր պայթուցիկ նյութ  
է. պայթում է հրումներից, հարվածներից,  
շփումից և կրակից: Դետոնատորի պայ-  
թյունը ծանր վնասներ (պոկում և ձեռքի  
մատները, աչքերն և հանում) և նույնիսկ  
մաս և պատճառում: Դժբախտ պատահար-  
ներից լուսափելու համար միանգամայն  
արգելվում ե՝ 1) դետոնատորը քանդել և  
շառաչուկ սնդիկը դուրս փորել, 2) դետո-  
նատորը ուժեղ տաքացնել, 3) դետոնատո-  
րին (նոնակը լցնելիս) վորեկ բանով  
լիփել:

18. Բոցավառող մեխանիզմը ծառա-  
նում է հրապատիճը (պիստոնը) պայթեց-  
նելու համար: Բաղկացած ե՝ 1) գարկանից  
իր ասեղով, զլիսով յել հրահանով, 2) գա-  
լարով մարտական զավանակից, 3) մար-  
տական վոտքից, 4) պահպանիչ բուլիքից:

19. Զարկանը ծառայում է հրապա-  
տիճը պայթեցնելու համար: Տեղափորվում  
է նոնակի մարմնի յերկայնակի վաքի մեջ:

Մի կոր յերկաթե ձողիկ ե 8 սանտիմետր  
յերկայնությամբ։ Առջևի մասում վերած-  
վում ե սրածայր պողպատե տսեղի։ Զար-  
կանի կողի վրա, տսեղին մոտիկ, տեղա-  
փորփած ե հրահանը, կոր հարթ վերածու-  
թիկի ձևով։ Հրահանը դուրս ե գալիս վա-  
քից թիթեղի պատռհանի միջով։ Զարկանը  
մարտական վոտքի վրա յե դրվում ձեռքի  
մասներով հրահանը բռնած և պահպանիչ  
վոտքի վրա պահվում ե պահպանիչ բուլի-  
քով։

20. Զարկանի յետեի մասը կլորակ  
պլախի ձև ունի։ Զարկանն այս զլիքի միջո-  
ցով պահվում ե մարտական վոտքի վրա  
դրված ժամանակը լծակի յերկճիղով (մար-  
տական վոտքով)։

21. Բարակ գալարուն մարտական  
զապանակը հազգվում ե զարկանին կոթառի  
և հրահանի միջև։ Զապանակը զարկանին  
ուժ ե հաղորդում հրապատիճին խփելու  
համար։

22. Մարտական վոտքը բաղկացած ե

1) լծակից իր սոնակով մեկ յերկճիղով,  
2) լծակի զապանակից, 3) ողակից։

ա) Լծակը յերկուատակ ծալած յերկա-  
թե թիթեղ ե, վորը տեղափորփած ե կոթի և  
պարանոցից վաքի մեջ։ Լծակը ամրացրած  
ե կոթի վերին մասում սոնակի վրա, վորի  
շուրջը կարող ե պտտվել։

բ) Յերկճիղը, յերկու յերկաթե ձյուղի  
ձևով ամրացրած ե լծակի առջևի մասին,  
նրա մարմնին ուղղահայց։ Իր ձյուղերով  
նա զարկանի գլխից քաշում ե մարտական  
վոտքի վրա դնելիս։

գ) Լծակի յերկճիղանի զապանակը  
գտնվում է կոթի վաքի մեջ։ Մի ծայրով նա  
հենվում ե լծակի յետեի մասի վերին պա-  
տին, մյուսով կոթի ծոծրակին։ Նրա ծալված  
կողմը ուղղված ե գեպի առաջ։ Զսպանա-  
կը պահում է լծակի յետեի մասը բարձ-  
րացրած դրության մեջ, յերկճիղը՝ ցածր-  
ցրած, այսինքն՝ ձգտում ե զարկանն իջեց-  
նել։

դ) Յերկաթե ողակ հազգվում ե նըռ-

նակի կոթին և լծակի յետի մասը ընկըղ-  
մում ե միաժամանակ բարձրացնելով յերկ-  
ճիղը։ Ողակը հագյրած ժամանակ՝ զարկա-  
նը մարտական վոտքի վրա յե դրած։

23. Պահպանիչ բուլիթը նշանակված ե  
զարկանը պահպանիչ վոտքի վրա պահելու  
համար։ Բուլիթը տափակ, դեղին պղնձի  
մի փոքր ծռած թիթեղ ե. տեղավորված ե  
նոնակի մարմնի խոտորնակի փորատի մեջ,  
հրահանի պատուհանին ուղղահայաց։ Պահ-  
պանիչ բուլիթը կարող ե շարժվել փորա-  
տի մեջ և պատուհանը ծածկել միջին մա-  
սում, այդպիսով զարկանը պահելով, նրա  
հրահանից բռնած։

### ՆԻՆԱԿԸ ԼՅԵՆԵԼԸ

Նոնակը լցնել կոչվում ե դետոնատո-  
րը նոնակի մեջ մոցնել։ Լցնելը կատար-  
վում ե ըստ հնարավորության, գործո-  
ղությունից անմիջապես առաջ։

Նոնակներն առաջուց լցրած և զարկանը  
պահպանիչ վոտքի վրա դրած ունենա  
հարկավոր ե. ա) պահպան ուղեկալներում,

գաշտայլն պահուկներում և գաղոնքներում,  
բ) մարտական հետախուզության ժամա-  
նակ, գ) մարտի ժամանակ, հակառակոր-  
դին մինչև 300—400 քայլ մոտենալիս։  
Միանգամայն արգելվում ե նոնակները  
լցած ունենալ. ա) յերթի ժամանակ բ)՝  
ոժանդակներում, նույնիսկ մարտական գը-  
ծին ամենամոտիկ ոժանդակներում. գ) առ-  
հասարակ ամեն տեղ, յերբ նոնակով ան-  
միջապես գործելու անհրաժեշտություն չի  
նախատեսվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մարտական նըռ-  
նակների վարժական նհաման ժամանակ  
գետոնատորները տրվում են և լցնելը կա-  
տարվում է կրակի գծում և այն ել մի-  
այն մի հերթական փոխի համար։

25. Լցնելը կատարվում ե հետեւյլ  
հաջորդականությամբ՝

1) Հանել ողակը (վորն ամրացնող  
պարանը պետք ե հանել և նետել առաջուց)։  
Այդ դեպքում զապանակը կբարձրացնի լը-  
ծակի յետի մասը, յերկճիղը կարձակի  
զարկանը։

2) Նոնակն աջ ձեռքով կոթից բըռնելով կոթի խզատակը գեղի բուռը և ծակին բոլորովին չսեղմելով, ձախ ձեռքի բութ մատով և ցուցամատով հրահանից բոնած յետ քաշել զարկանը յետեվի դրությանը։ Այդ դեպքում մարտական զսպանակը կսեղմվի հրահանի և զարկանի կոթառի միջև։

3) Նոյն մոմենտին սեղմել լծակի ներքեի ծայրը աջ ձեռքի մատներով և ընկղմնը մինչեվ դեմ առնելը։ Յերկճիղի ծայրերը կը բռնեն զարկանի գլուխը և կը պահեն այն։

4) Շարունակելով աջ ձեռքի մատներով սեղմել լծակը, ձախ ձեռքի ափով ընդգրկել նոնակի մարմինը, իսկ նոյն ձեռքի բութ մատով պահպանիչ բուլիքը դնել հրահանի պատուանի դիմացը խոտորնակից Այդ դեպքում հրահանը կը կանգնի պահպանիչի յետել և ամուր կը պահվի նրա կողմից։ Այդ կինի պահպանիչ վոտքի դըրությունը։

5) Ազատել աջ ձեռքի ճկույթն ու մա-

տանու մատը և ձախ ձեռքով ողակն անցկացնել կոթի վրա մինչև կոթի խզատակի բըռակին գեմ առնելը։ Այդ գեպքում լծակի յետեկի մասը մի փոքր բարձրանում է, բայց յերկճիղը, այնուամենայնիվ, կպահի զարկանը։ Այդպիսով ողակը պահում է զարկանը մարտական վոտքի վրա։

6) Բոնել նոնակը մարմից ձախ ձեռքով, զարկանի փոքրաաը ձեռքի ափից գեղի գուբու. աջ ձեռքի մատներով բանալ դոնակը։

7) Շարունակելով նոնակը ձախ ձեռքով բռնելը, աջով վերցնել գետոնատորը պարանոցից և նոնակի մեջ դնել յերկար ծայրով՝ ձագարի մեջ, կարճով՝ փոքրատի մեջ։

Եեթե վետոնատորը դիենք, առանց նախորդ զարկանը պահպանիչ վոտքի վրա դնելու, ապա պատիճը կհասնի զարկանի ասելին յեվ կալաթի։

Յեթե գետոնատորը հեշտությամբ չի մըտնում, կալելի յե ուժեղ, բայց սահուն կեր-

պով հուպի տալ աջ ձեռքի բութ մատով, մինչև ներս մտնելը: Դետոնատորին վորեցի բանով խփելը կատեզորիկ կերպով արգելվում է: Յեթե հուպի տալուց հետո յել դետոնատորը չի մտնում, ապա վերցնել մի ուրիշ դետոնատոր: Յեթե վոչ մի դետոնատոր չի մտնում, ապա նոնակի ծագորը կարգին չի և այդ նոնակը խոտանվում է,

8) Դոնացը փակել և կեռով ամրացնել, վորպեսզի նետելու ժամանակ դետոնատորը չընկնի:

### ՆՌՆԱԿՈՎ ԳՈՐԾԵԼԸ

26. Նոնակով գործելու համար պետք

1) Լցրած նոնակը վերցնել աջ (կամ ձախ) ձեռքը կոթից բոնած, կոթի խզատակը դեպի ձեռքի ափը, լծակը դեպի առաջը: Այդ դեպքում ողակը պետք է տեղափորվի ձեռքի միջամատի և մատանու մատի միջև:

2) Կոթը ամուր սեղմել մատներով, լծակը բնկղմել մինչև գեմ առնելը: այն ժամանակ ողակը մի փոքր կազատվի, իսկ զարկանը կընդունի վերջին յետեի դրությունը:

3) Նոնակը պահելով նույն դրության մեջ, ապատ ձեռքի բութ մատով պահպանիչ բուլիքը յետ մղել մինչև գեմ առնելը:

4) Նոնակը նետել դեպի նպատակն այնպես, վոր ողակը մնա ձեռքում: Այդ դեպքում զսպանակը կբարձրացնի լծակի յետեի ծայրը, յերկճիղը կազատի զարկանը: զարկանի ասեղը կը պայթեցնի պատիճը: պատիճը կբոցավառի բուժինը: 4 վայրկանից հետո կրակը կը հասնի դետոնատորին և նոնակը կպայթի:

Ողակն առաջուց հանելը խստիվ ար, գելվում է:

ՆՌՆԱԿՆԵՐԻ ԽՑԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

27. Նոնակները խցանվում են գործարանում ցինկապատ թիթեղի տուփերի մեջ

ամեն մեկում 20 հատ: Նոնակները շար-  
վում են տուփի մեջ յերեք շերտ. ամեն մի  
շերտը փայտե գարակների վրա, վորոնց  
վրա կան կտրվածքներ յուրաքանչյուր  
նոնակի համար: Նոնակների զարկանները  
իջեցրած են, ոդակները հազցրած և պա-  
րաներով ամրացրած, պահպանիչները  
զրած: Տուփերի պատերը ներսից պատած  
են թաղիքով և սանտիմետր հաստությամբ,  
նոնակները ցնցումից և խոնավությունից  
պահպանելու համար: Տուփի կտրարիչը  
ամուլ կերպով զոդված է, տուփը պետք է  
բանալ հատուկ բանալիով: Բացի 20  
նոնակից տուփի մեջ և զրվում 20 հատ  
պահեստի զապանակ կոտրվածները փոխա-  
րինելու համար: Զորս տուփը խցանվում են  
ընդհանուր փայտե արկղի մեջ, վորը և  
հանդիսանում է խցանման միավոր (80  
նոնակ):

Այդպիսի արկղներով նոնակները  
ստացվում են զորամասերում:

28. Դետոնատորները պահելու ժամա-

նակ խցանվում են նոնակներից միանգա-  
մայն առանձին, 21-ական հատ (մեկը պա-  
հստի), սպիտակ թիթեղի տուփերում:  
Դետոնատորները հազցվում են պինդ յերկու  
կողմից փայտե կոճղակին: Տուփը ամուլ  
զոդվում է: Զորս տուփը խցանվում են մի  
փայտե արկղում (84 դետոնատոր):

Նման արկղներով դետոնատորները  
պահեստից ստացվում են զորամասերում:

29. Զորամասի զինապետը նոնակները  
և դետոնատորները պահեստից ստանալիս  
պարտավոր է ուշադրություն դարձնել  
միայն խցանման սարքին լինելու վրա: Իսկ  
նոնակների և դետոնատորների զննությունը  
կատարվում է այդպիսիները զինվորների  
ձեռքը հանձնելիս՝ վաշտերում և զորախը-  
բերում:

30. Նոնակների զննությունը կատար-  
վում է հետևյալ հաջորդականությամբ:

1) Դրսի կողմից զննել նոնակի մար-  
մունք: Խիստ ժանգուած նոնակները խո-  
տանվում են և վոչնչացվում են պայթեցնե-  
լով: Թեթև ժանդը վնասակար չե:

2) Զննել ծագսրբ։ Նրա մեջ մեծ քանակությամբ կանաչ ժանդի (պղնձի թթվուտ) յեղած ժամանակը նռնակը խոտանվում է։ Զագարի պատերին յեղած թեթև ժանդը չի վնասում։

3) Ստոգել բոցավառող մեխանիզմի աշխատանքը։ Դրա համար միանգամայն արձակել ողը կոթին ամրացնող պարանը. զարկանը մի քանի անգամ գնել մարտական և պահպանիչ վոտքերի վրա և զարկաննիցնել։

31. Բոցավառող մեխանիզմի սովորական վնասվածքները հետեւյալն են՝

1) Լծակի զսպանակը կոտրված ե. փոխարինում են այն պահեստի զսպանակով։

2) Նեղ կամ լայն են ցցված յերկճիղի ճյուղերը. այնպես հարմարեցնել, վոր նրանք զարկանի զլուխը բռնեն և ամուր պահեն։

3) Մարտական զսպանակը կոտրված ե—սարքել չի կարելի։

4) Զարկանի ասեղը կոտրված ե—սարքել չի կարելի։

5) Ասեղը կթնառոնում չի կանգնած, այսինքն՝ ուղղված ե գեպի վարող կոթառի պատը և խփում ե վհչ թե պատիճին, այն փողակի ծայրին. հրահանը այս կամ այն կողմը ծռելով ասեղին ճիշտ ուղղություն են տալիս։

6) Պահպանիչը կոտրված ե—սարքել չի կարելի. սակայն այդպիսի նռնակը կարող ե ոգտագործել փորձված նռնաձիգը, լցնելով նռնակը նետելուց անմիջապես ուղղ։

7) Զարկանը դժվարությամբ ե շարժվում վարի միջով, յեղած ժանդի պատճառով։ Արգելը վերացնելու համար զարկանով այնքան աշխատել, մինչև վոր նապատ շարժվի (զարկանը տեղից խաղանել)։

32. Դետոնատորներ զննելիս—ուշադրություն դարձնել ժանդին. Յեթե հենց գետնատորի պատիճը կամ մատնոցն ե ժան

գոտել, ապա դետոնատորը խոտանվում է:  
Միանգամայն վստահելի յէ լինում միայն  
թարմ, փայլուն դետոնատորը։ Պղինձը  
մթափնելիս դետոնատորն աբղեն կասկածե-  
լի յէ։

Խիստ ժանգոտ դետոնատորները շատ  
վտանգավոր են. ուստի այդպիսիները  
պետք է անմիջապես վոչնչացնել պայթեց-  
ման միջոցով։

### III

## ՄԻԼՈՒ ՍԻՍՏԵՄԻ ԶԵՌՈՔԻ ՆՌՆԱԿ ՆՌՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՏԿՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նոնակի քաշն և 550 գրամ ( $1\frac{1}{3}$   
ֆունտ) և ծառայում և մարտիկի ձեռքի  
ուժով 60 մետր ( $80 - 90$  քայլ) տարածու-  
թյան վրա նետելու համար։

2. Պայթյունը հետեւում և նետելուց 5  
վայրկյան հետո և ստացվում և ավելի քան  
150 բեկոր վորոնք պահպանում են հար-  
վածելու ընդունակությունն պայթյունի տե-  
ղից մինչև 50 մետր ( $70 - 80$  քայլ) տարա-  
ծության վրա. նոնակը նետողը և նրա  
հարկանները, վիրավորումից խուսափելու  
համար, պետք է ոգտվեն ծածկաբաններով։  
Ուստի այս նոնակով հարմար և ոգտվելու  
ժիայն պաշտպանության ժամանակ։

3. Նոնակները մարտում տրվում են  
առհասարակ բոլոր հրաձիգներին:


4. Նոնակի մարտական կոչումը համա-  
րյանույնն է, ինչ վոր հրացանային նոնակ-  
ներինը: Պաշտպանության ժամանակ այդ  
նոնակն ամենից ավելի կիրառելի յե զեպի  
դիրքերի առաջ ընկած կարեռը կետերը,  
գնդացըային բները, արգելքների անցքերը  
և այլն տանող մոտավոր ծածկված մա-  
տուցները փակելու համար:

### ՆՌՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ: ԲՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ

5. Նոնակը բաղկացած է թուչե ձվաձե  
մարմնից, վորը լցված է պայմուցիկ լիցքով,  
բոցավառող մնխանիզմից զարկանով և նըռ-  
նակը գործադելուց առաջ հազցվող պա-  
տիճ-դետոնատորից:


### ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6. Մարմինը թուջից է, ձվաձե: Յեր-  
կարությունը 10 սանտիմ., տրամագիծը 6



Նկար 6. Մելոի սիստեմի ձեռքի նոնակ

սանտիմ. պատերի հաստությունը մինչև 1  
սանտիմ. ներսից պատերը հարթ են, դըր-  
սանտիմ. ներսից պատերը հարթ են, դըր-



- Նկար 7. Միլսի ձեռքի նոնակի կտրվածքը.
- 1) Նոնակի մարմինը; 2) Գերին պատուհանի տափողակը;
  - 3) Պատուհանի պտուտակը; 4) Մարտական գոտի լծակը;
  - 5) Զարկան; 5ա) 2 առեղ; 6) Մարտական զսպանակ; 6ա) Զար-
  - տանակը; 7) Կենարանական բուլիկը ողակով; 8) Լծակի
  - տորի պակը; 10ա) Կենարանական գոտակ; 10) Պատճեղական-
  - թիկֆորդյան քուղ; 12) Դետոնատոր (շատաչուկ սնդիկ);
  - 13) Պատճեղ (պիստոն); 14) Պայթուցիկ լիցք:

կտրատված են քառակուսիների, Մարմինն այդ ակոսներով ավելի հեշտ ե փշրվում բեկորների:

### 7. Նոնակի մարմինն ունի՝

1) Լայն կլոր պատուհան պտուտակած ակոսով—տեղափորվում ե մարմնի վերին ծայրում; Այս պատուհանից նոնակը լցնում են; Պատուհանը պտուտակվում ե տափակ տափողակով:

2) Նեղ կլոր պատուհան հարթ պատերով—գտնվում ե մարմնի ստորին ծայրին: Այդ պատուհանով գուրս ե գալիս զարկանի գլուխը, յերբ զարկանը մարտական վոտքին ե դրված:

3) Փոքր կլոր պատուհան պտուտակած ակոսով—գտնվում ե մարմնի կողքին, նրա ստորին ծայրին ավելի մոտ: Այս պատուհանից նոնակի մեջ լցվում ե լիցքը (նոնակը լցնում են): Պատուհանը պինդ պտուտակվում ե պտուտակով գործարանում, այդ պտուտակը գուրս պտուտակել գորամասում արգելվում ե:

4) Յերկու արտաքին յերկայնակի կատար, վարոնք թա իվգւմ են չուգունից մարմմի հետ միասին։ Այդ կատարները ընկած են մարմնի յերկայնքովը նրա ստորին մասում։ Կատարների միջի տարածությունը 1 սանտիմ. ե։ Նեղ պատուհանը տեղափորվում ե այդ կատարների ստորին ծայրերի միջև։

Այդ կատարների միջև տեղափորվում ե մարտական վոաքը լծակի ձեռփ։ Այդ լծակի սոնակի համար կատարների ստորին ծայրում, նեղ պատուհանի գծի վրա, կան յերկու կլոր փորվածք։ Այդ փորվածքներից մի փոքր վերև յերկու կատարներումն ել կան կլոր անցքեր պահպանիչ բուլիքի համար։

5. Կենտրոնական ալյումինե փողակ, վորն անցնում ե վերին լայն պատուհանից մինչև ներքեի նեղը։

Լայն կենտրոնական փողակից վերևի մասում կա մի նեղ ճյուղափորում դետոնատորը տեղափորելու համար։ Այդ ճյու-

ղավորումը թափված ե ալյումինից, հենց փողակի հետ միասին։ Կենտրոնական փողակը պինդ զողված ե նոնակի մարմնի ծայրերին։ Փողակի պատերի և մարմնի ներքին մակերեսի միջև վորոշ տարածություն ե մնում։


8. Պայշտուցիկ լիցքը իրենով լցնում ե կենտրոնական փողակի և նոնակի մարմնի միջև յեղած տարածությունը։ Բաղկացած ե 85 գրամ ուժեղ փշրտող պայթուցիկ նյութից։ Քանի դեռ նոնակը սարքին ե, այդ նյութը գործածության համար միանգամայն անվտանգ ե։ Հարվածներից և կրակից չե պայթում, այլ միայն գետոնատութից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Յերբ կենտրոնական փողակը ծածկվում է ուժեղ ժանգով լիցքը դառնում ե վտանգավոր։ Այդպիսի նոնակները պետք ե անմիջապես պայթեցնելով վոչնչացնել։

9. Պատիճ-ղետոնատորը հանդիսանում է նոնակից միանգամայն առանձին մաս, նա բաղկացած ե՝ 1) Պատկից պատիճով,

2) Բիկֆորլյան քուղից (հեռակայական մաս)  
3) 2 գրամ շառաչուկ սնդիկ պարունակող  
կարմիր պղնձե մատնոցից (ինքը դետոնա-  
տորը):

10. Պասկը մի փոքր մե-  
տաղե գլան և թափնթափ  
(սոնակի ուղղությամբ) անց-  
քով: Այդ անցքով անց և կե-  
նում բիկֆորլյան քուղի  
ծայրը, վորը պասկի ստորին  
շուրթի հետ հավասար և  
կանգնում: Այդտեղ ամրաց, զատիճ-դետոնատո-  
վում և կոր պատիճը, վորի  
մեջտեղում մի անցք էա: Պատիճը կոչված  
և նոնակում կրակի տռաջին կայծը դոյաց-  
նելու համար:



Նկար 8.

Պատիճի անցքը փակցվում և մաղա-  
ղթով: Այդ անցքը ծառայում է բիկֆոր-  
լյան քուղը վառվելիս գագերի անցնելու  
համար:

11. Բիկֆորլյան քուղը տռածղական սև  
քուղ և, վորը թ տռախ նման ծոված է, իր

յերկար ծայրով այդ քուղը ամրացված ե-  
կարմիր պղնձե մատնոցին և անմիջապես  
կպչում է շառաչուկ սնդիկին: Կարճ ծայ-  
րն անցնում է պսակի միջով և կպչում ե-  
պատիճին: Այդպիսավ բիկֆորգրան քուղը  
կրակը ստորակած է պատիճից և 5 վայրկյան  
վառվելուց հետո կրակը (փոխանցում է գե-  
տանատորին: Քուղը բաղկացած է արտա-  
քին շաղիկից կազմված ձյութած թելերից  
և վառողափոշու յերակից, վորը և փոխան-  
ցում է կրակը:

Զյութած թելե շաղիկը խոնավություն  
չի անցկացնում, ուստի և նոնակը չի հանգ-  
չում վոչ ցեխի և վոչ ջրի մեջ:

12. Ինքը դետոնատորը, կարմիր պղնձե  
մատնոցի ձևով 2 գրամ շառաչուկ սնդիկով  
ամրացվում է սեղմիչի ոգնությամբ բիկ-  
ֆորգյան քուղի յերկար ծայրում: Երա կո-  
չումն և նոնակը պայթեցնել:

Դետոնատորի հետ վարվելու կանոն-  
ները նույնն են, ինչ վոր 1914 թվի տիպա-  
րի նոնակներինը:

13. Բոցա խոտի մեխառնիզմը կոչված է պատիճը պայթեցնելու համար: Նա բաղկացած 1) զարկունից ասակով, 2) ասեղով յեվ զլխով, 3) գալարուն մարտական զապանակից, 3) մարտական վոտքից, վորը լծակած և սոնակով և պահպանիչ բուլիքի համար 2 անցքով. 4) յերկճիղ պահպանիչ բալիքից ողակով:

14. Զարկանն իրենից ներկայացնում է մի գլանաձև յերկաթե ձող: Նրա վերեկի ծայրում կա մի կլոր լայնության պսակ: Պսակը ծառայում է իրքի հենարան մարտական զապանակի համար: Պսակի վերին կտրվածքի վրա տեղափորում են 2 ասեղ, բլրակների ձեռվ, վորոնք խփում են պատիճի յեզրերին (պատիճի մեջտեղը կա մի անցք գաղերի դուրս գալու համար): Զարկանի ստորին ծայրը նախ նեղանում է և ապա վերջանում է տափակ զլխով: Զարկանը մարտական վոտքի վրա յե պահվում զլիքից լծակի միջնորդ:

15. Ուժեղ գալարուն մարտական զրս-

պանակը տեղավորված է զարկանի պսակի և մարմնի ստորին շուրջի միջն. զսպանակի համար իբրև հենարան կենտրոնական փողակի ստորին ծայրում կառուցված է հենարան-սատիճան:

Զսպանակը զարկանին ուժ է տալիս պատիճին խփելու համար:

16. Մարտական վոտքը ծառայում է զարկանը մարտական վոտքի վրա պահելու համար: Նա ներկայացնում է իրենից մի ծոռած յերկաթե լծակ—ստորին մասում տափակ, վերին մասում կատարների ձեռվ ծոված ծայրերով: Այդ կատարներում կան անցքեր պահպանիչ բուլիքի համար: Լծակի վերին մասը վերջանում է կիսակլոր փորվածքով զարկանի զլուխը բոնելու համար: Այդ փորվածքի կողքերին, մի փոքր յետ նահանջած, կա յերկու ձուլաձև յելուններ, վորոնք կազմում են լծակի սոնակը: Սընկը զտնվում է նոնակի մարմնի կատարների փորվածքներում: Լծակը կարող է պըտագել սոնակի շուրջը:

17. Պահպանիչը բուլիքը բարակ կիսա-  
գլանաձև տափակ յերկաթե թիթեղ և կըրկ-  
նակի ծալած։ Բուլիքի պարանոցին ամբաց-  
ված և կլոր յերկաթե ող։ Բուլիքը ծառա-  
յում և լծակը մարմնին սեղմած պահելու  
համար (պահպանիչ վոտքի դրություն)։

ԲՈՅԱՎԱՐՈՂ ՄԵԽԱՆԻՉԱՐԻ ՔԱՆԴԵԼԻ  
ՅԵՎ ՍԱՐՔԵԼԻ

18. Կատարվում և յերկու դեպքում՝  
1) վարժական նպատակով, վրայեսզի ցուց  
արվի նոնակի մասերը և կառուցվածքը,  
2) ձմեռը մարտական զսպանակի և զար-  
կանի վրայից թանձը յուղը հեռացնելու  
համար։

19. Քանդումը կատարվում է հետեւյալ  
կարգով՝

1) Նոնակը ծախ ձեռքում մարմնից  
բռնած, տափողակը դեպի վերե, աջ ձեռ-  
քի մատներով (յերբեմն բանալիով) դուրս  
պտուտակել տափողակը։

2) Վերջնել նոնակը և բաց լայն պա-

տուհանը դեպի վայր գնել վորեե տափակ  
բանի վրա (փայտ, փուած շինել)։ Աջ ձեռ-  
քի ափով լծակն ամուր սեղմելով նոնակի  
մարմնին, ձախ ձեռքը մատներով դուրս  
քաշել պահպանիչը բուլիքը։

3) Բուլիքը գեն գնելով և ձախ ձեռ-  
քի մատների ծայրով նոնակի մարմինը  
պահելով լծակին հակագիր կողմից, հետրդ-  
հետե աջ ձեռքի սեղմումը և ակի վրա թու-  
լացնել։ Լծակի վերին ծայր կսկսի բարձ-  
անալ մարտական զսպանակի ազգեցու-  
թյան տակ, իսկ զարկանի գլուխը կձգի  
լծակի ստորին ծայրը։ Յերբ լծակի վերին  
ծայրը կը հեռանա մարմնից 3 սահմանմետր,  
լծակի ստորին ծայրի կիսակլոր փորվածքը  
բաց կը թողնի զարկանի գլուխը և զար-  
կանը ուժով կլիփի այն առարկային, վո-  
րի վրա ենված և նոնակը։

4) Բարձրացնել նոնակը և վերցնել  
դուրս ընած զարկանն ու մարտական  
զսպանակը։ Յեթե հարկագոր և սրբել նը-  
րանց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — ՅԵՎ զարկանը

շատ ուժեղ և խփում, կարող ե վիրավորել:  
Լծակը նույնպես մեծ ուժով և գեն թռչում  
և յեթե մի անգամից բաց թողնվի կարող և  
վիրավորել: Ուստի քանդելու ցույց տրված  
կարգը պարտադիր է:

20. Մարքելը կատարվում է հետեւյալ  
կարգով՝

1) Մարտական զսուանակիլ հազցնել  
զարկանին այնպես, վորպեսզի նրա մի  
ծայրը գեմ առնի զարկանի պատկին:

2) Զարկանը մարտական զսուանակիլ  
հետ միասին դնել կենաբոնական փողակի  
մեջ լայն պատուհանի միջով, զարկանի գը-  
լուխը դեպի առաջ:

3) Վերցնել հրացանի շամփուրը կամ  
մի նման առարկա, մի ծայրով այդ շամ-  
փուրը գեմ անել սեղանին, նստարանին,  
ծնկանը, իսկ մյուս ծայրը մտցնել կենաբո-  
նական փողակի մեջ և դեմ անել զարկա-  
նի պսակին: Զախ ձեռքով նոնակի մար-  
մինը ափն առած բռնելով (թողնելով մարմ-  
նի կատարները բաց) նոնակով ամուր սեղ-  
մել շամփուրին: Մարտական զսուանակը կը-

սեղմկի, զարկանի գլուխը դուրս կգա  
ներքեի նեղ պատուհանից:

4) Նույն րոպեյին աջ ձեռքով մտցնել  
լծակը նրա սոնակով կատարների փոր-  
փածքները, ստորին ծայրով ընդգրկել զար-  
կանի գլուխը և սեղմել լծակը նոնակի  
մարմնին աջ ձեռքի ափով:

5) Զախ ձեռքի մատներով տեղը դը-  
նել պահպանից բուլիքը և նրա մատները  
միմյանցից հեռացնել վորպեսզի դուրս  
չընկնի:

6) Սերս պլուստակել լայն պատուհա-  
նի տափողակը:

### ԼՅՆԵԼԸ

21. Կատարվում է ըստ հնարավորու-  
թյան գործելուց մի փոքր առաջ հետեւյալ  
կարգով՝

1) Վերին պատուհանի տափողակը  
զորս պլուստակել:

2) Բռնելով նոնակը ձախ ձեռքով, պլ-  
տուհանը գեպի վեր, նոնակի մեջ մտցնել  
պատիճ-դետոնատորը: Այդ միջոցին պը-  
պատիճ-դետոնատորը:

սակը պատիճի հետ կմանի կենարոնական փողակի մեջ, իսկ մատնոցը շառաչուկ մնդիկով նրա ձյուղագործան մեջ:

Յեթե պսակը, բիկֆորդյան քուզը ուղղվելու պատճառով մատնոցից հեռու մնա, կարելի յէ մատներով քուզը տրորել և գետնատորն ու մատնոցն իրար մոտեցնել:

3) Տափողակը մինչև վերջը ներս պըտուակել:

### ՆՄՆԱԿՈՎ ԳՈՐԾԵԼԸ

22. Նոնակով նպատակը հարվածելու համար պետք ե՝

1) Վերցնել լցրած նոնակը աջ կամ ձախ ձեռքը, լծակը զեպի ձեռքի տփրատափակը դեպի ներքեւ:

2) Նոնակը ամուր բոնած և բնակ չը թողնելով, վոր լծակը մարմիից հեռանա, ազատ ձեռքի մատներով հանել պահպանիչ բուլիքը:

3) Նոնակը նետել դեպի նպատակը: Այդ միջոցին լծակը դեն և թռչում,

զարկանը պայմեցնում և պատիճը և 5 վայրկյանից հետո նոնակը պայմում եւ:

Պայման մոմենտին նոնածիզը և նրա հարկանները պետք և ծածկույթի յետել լինեն, վորովհեան նոնակը հարվածում և մինչև 50 մետր, իսկ միջին նետվածքը 35 մետր եւ:

23. Յեթե նետելը հետաձգված ե, բուլիքը զգուշությամբ տեղը դնել, իսկ հետազայում նաև դաստիկել նոնակը: Դատարկելիս վերին պատուհանի տափողակը գուրս և պառատակվում, և գետնատորը զգուշությամբ մատներով դուրս և բաշվում, բիկֆորդյան քուզից բոնած:

ՆՄՆԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐԻ ԽԲ-  
ՑԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԶՆՈՒԹՅՈՒՆԸ

24. Միլսի նոնակները խցանվում են 12 հատը յերկարագուն փայտե արկղների մեջ, արկղներն ունեն մերքերով կափարիչներ: Արկղը յերկու ուղղաձիգ պատերիչներ: Արկղը յերկու ուղղաձիգ պատերիչներ: Ամեն մի բոլ յերեք մասի յեւ բաժանվում: Ամեն մի

կողքի մասը բաժանվում է յեռանկյունի փայտե մութակներով 6 բների, ամեն մի նոնակ տեղափորվում է հատուկ բնում։ Նոնակների զարկանները դրված են մարտական վոտքի վրա, պահպանիչ բուլիքները դրված են (պահպանիչ վոտքի դրություն), գերին պատուհանի տափողակները պառատակված են մինչև գերջը։ Նըռնակները կանգնած են բներուա տափողակները դեպի ներքեւ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ. — Մարտական զըսպանակն այնքան ուժեղ է, վոր հնարավոր ելինում նրան միշտ սեղմած պահել, և նա դրանից իր առաձգականությունը չի կորցնում։ Այդպիսով, զարկանը դրվում է մարտական վոտքի վրա գեռ գործարանում, իսկ նոնաձիգին մնում է միայն լցնել նոնակը։

25. Դետոնատորները խցանվում են 12 հատ մի գլանաձև տուփի մեջ, վորը լաքած ստվարաթղթից կամ թիթեղից է։ Տուփի մեջ կան իերկու ստվարաթղթե պատեր, վորոնք տուփի տակին գուգահեռ են։ Ստորին պատն ունի 12 կլոր անցք (դետոնա-

տորի մատնոցների համար)։ Վերին պատն ունի 24 անցք (մատնոցների և պսակների համար)։

Տուփը դետոնատորների հետ տեղաբորվում եարկղի նոնակներին հարեան միջին բաժանմունքում։ Այդ բաժանմունքում դրվում է նաև տափողակների բանալին։

Փորձը ցույց է տվել այդպիսի խցանան անվտանգությունը. յեթե բոլոր 12 դետոնատորն ել տրաքում են արկղի միջին բաժանմունքում վոչ մի նոնակ չի պայթում։

26. Նոնակները պահեստից ստանալիս ուշադրություն ե դարձվում միայն խցանման սարքին լինելու վրա։ Նոնակների և դետոնատորների զննումը կատարվում է զորամասում (վաշտերում և զորախմբերում)։

27. Զննումը կատարվում է հետեւալ կարգով։  
1) Զննել նոնակները դրսից։ Արտա-

քին շատ ուժեղ ժանդի գեպօւմ նոնակը խոտանվում է:

2) Զննել զետոնատորի փողակը յեկ ղետոնատորի համար յեղած ջյուղավորումը: Դրա համար հարկավոր է մատներով կամ բանալիով դուրս պառատակել վերին պատուհանի տափողակը: Յեթե փողակում կա թեթև, փոշիաձե, կանաչ ժանդ, նրանց խոզանակով մաքրել և ցնցելով դուրս թափել, նոնակը պիտանի յե: Յեթե ժանդը շատ է, նոնակը վտանգավոր է և խոտանվում է:

28. Զարկանն ու մարտական զսպառակն այնքան ամուր են, վոր անվտանգ կերպով դիմանում են ամենաուժեղ ժանդին: Ուստի սովորաբար նրանց աշխատանքը բոլորովին չեն ստուգում: Միայն ձըմեռը թանձը յուղած նոնակները ստանալիս, անհրաժեշտ է մարտական զսպանակը յուղից մաքրել, ապա թե վոչ սառնամանիքին նոնակները չեն պայթի:

Այդ գեպօւմ պետք է լինում քանդել բոցավառող մեխանիզմը:

29. Դետոնատորների զննումը կատարվում է նույն կարգով, ինչ ցույց է տըրգամ 1914 թվի տիպարի նոնակների համար:

IV

ԶԵՌՔԻ ԾԱՆՐ ՆՌՆԱԿ ՖՈՒԳԱՍԱ-  
ՑԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՎԻՑԿՈՒ  
ՅԵՎ ՖՅՈԴՈՐՈՎԻ ՍԻՍՏԵՄԻ  
ՆԹՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ


1. Լցրած նոնակի քաշն և մոտ 2,2  
կիլոգրամ:

2. Պայթուցիկ լիցքի քաշը՝ մոտ 1,6  
կիլոգրամ:

3. Նոնակի մարմնի արտաքին տրա-  
մադիքը՝ 15 սանտմ.,

1. Մարմին. 2. պարանոց. 3. կոթ. 4. պայթուցիկ լիցք. 5. Հե-  
ռակայական փողակ. 6. պատիճ-գետանատոր. 7. զլուխ պա-  
տիճն հետ. 8. Զարկան «ա» ողակի հետ. 9. Գալարուն զբա-  
պանակ. 10. Վայրիչուց մեխանիզմի լծակ. 11. Վայրիչուց  
մեխանիզմի կոճակ. 12. Վայրիչուց մեխանիզմի զսպանակ.  
13. Պահպանիչ բուլիք. 14. Մարմինը պարանոցին միացնող  
բուլիքներ. 15. Պարաններ ծանրոցների հետ.

ԾԱՆԹՈՒԹՅՈՒՆ.—Զարկանը նկա-  
րում ցույց է տրված իջեցրած դրության  
մեջ:




Նկար 9. Նովիցկու և Ֆյոդորովի ձեռքի նոնակ.

4. Նոնակը մեծ կործանիչ ուժ ունի:  
 Համաշխարհային պատերազմի ժամանակ  
 նրանով փորձում ելին քանդել լարափա-  
 կոցներ (առ ծանրոցով պարանները), բայց  
 անհաջող: Ներկայումս նոնակը պետք է  
 դիմել իբրև պայթուցիկ փամփուշտ: Ուս-  
 տի այդ նոնակները չպետք են նետել, այլ  
 գնել այն առարկայի տակը, վոր հարկա-  
 վոր և պայթեցնել, բոցավառել սեղմելով  
 փայրիջույց մեխանիզմի կոճակը և փախ-  
 չել անվանդ տարածության չափ:

V.

1914 թՎԱԿԱՆԻ ՏԻՊԱՐԻ ԶԵՌՔԻ  
 ՆՌԱԿ ՖՈՒԳԱՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒ-  
 ԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼԻՑՔՈՎ



Նկար 10. 1914 թվի  
 տիպարի ձեռքի նոնակ,  
 լրացուցիչ լիցքով:

1. Ինքը նոնակը միում  
 են համարյա առանց փո-  
 փոխության: Նրա կա-  
 ռուցվածքի նկարագրու-  
 թյունը արված է վերե-  
 փում: Լրացուցիչ լիցքը  
 նրան ընդունակ է գարձ-  
 նում կործանելու թե-  
 րև բլինդամներ և խո-  
 չընդուներ:

2. Լրացուցիչ լիցքը  
 (1) տեղափորված է թի-  
 թեղյա զլանաձե տուփի  
 (?) մեջ, վորը իր պա-  
 րանոցով (3) հազցված  
 է նոնակի վրա այնպես,  
 վոր նոնակի վրա հա-  
 տուկ շինված բեկովիշ-  
 ները (4) մտնում են

մինչև վերջը լրացուցիչ լիցքի պարանոցի կտրունները։ Ապա նախապես այդ կտրուններից մեկի վրա գտնվող բուլիքը (5) յետքաշելով նոնակն այնպես են դարձնում, վոր նրա բներիկները մինչև վերջը մտնեն նույն կտրունների կողքի ծնկները և քաշում են այդ բուլիքը։

Այդպիսով զրված նոնակը կազմում է մի ամբողջություն լրացուցիչ լիցքի հետ միասին։

**ՆԻՆԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

3. Նոնակները մարտի ֆամար նախապատրաստելու համար պետք է նոնակը բաժանել լրացուցիչ լիցքի պատյանից, նոնակի մեջ դնել գետոնատորը (ինչպես ասված է 191+ թվի նոնակի նկարագրության մեջ), դարձուցակը դարձնել և նորից նոնակը միացնել լրացուցիչ լիցքի պատյանին։

4. Քործածության ձեզը ընդհանուր առմամբ նույնն է, ինչ վոր նովիցկու Ֆյոդորովի նոնակինը (տես վերը)։

VI.

**1915 ԹՎԻ ՏԻՊԱՐԻ ՀՐԱՑԱՆԱՅԻՆ  
ՆՌՆԱԿ (ՇԱՄՓՈՒՐԱՎՈՐ)**

**ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ**

1. Նոնակի յերկարությունն է առանց փողակի և առանց շամփուրի 7 սանտիմ.։

2. Նոնակի յերկարությունն է փողակի և շամփուրի հետ 46 սանտիմ.։


3. Լցրած նոնակի քաշը մոտ 600 գրամ է (1,5 մունա):

4. Պայթուցիկ լիցքի քաշը մոտ 125 գրամ (30 մմխալ):

5. Հրաձգության հասողությունը բարձրացման անկյան  $45^{\circ}$ -ի դեպքում — մոտ 220 քայլ:

6. Բեկորների քանակը մոտ 300, վորոնք թռչում են մինչև 200 քայլ շառակիղ ունեցող տարածության վրա։

7. Նոնակներով հրաձգությունը կատարվում է սովորական հրացանով հատուկ (փոքրալից) փամփուշաներով։ Հրացանի նշանառության (նրան վորոշ բարձրացման անկյուն տալու) համար դործ է ածվում նույնպիսի մի կվարչանոտ, ինչպիսին դորժադրվում է և Դրակոնովի նոնակի համար։



Նկար 11.

1915 թվի տիպարի հրացանային նոնակ.

ՆՈՆԱԿԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Նոնակը գետին ընկնելիս կամ վորուելով կազմելիս, զարկանը (7) շարունակում է շարժումը իներցիայով, սեղմում է զսպանակը (9) և իր խայթոցով ծակում է պատիճը (6) այնպիսի դրության մեջ, որը զարկայի պտուկը արդեն դուրս է զալիս փուզակի պոչածասի անցքից, այդ անցքը բանալով։ Պատիճից (6) ստացված բոցը զարկանի կողքերից հոսելով, անցքի միջով թափանցում է պատիճ-դիտոնատուրին և նրան բոցավառում է։ Շառաչուկ սնդիկը պայթում է, վորին հետեւմ է պայթուցիկ լիցքը պայթյունը։ Նոնակը պայթելիս ստացվում է մոտ 300 բեկոր, պայթելիս ստացվում էն մինչև 150—200 քայլ։

ՆԱԽՎԱՏՐԱՍՈՒԹՅՈՒՆ ԶԻԳԻ ՀԱՄԱՐ  
ՑԵՎ ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ ՆՈՆԱԿԱՎ

9. Հանել հրացանի վրայից սվինը և կվագրանտը հազցնել փողի վրա այնպես, որ նա տեղափորվի ազուստի ստորին ողի վոր նա

մոտ, այդ սիջոցին կվաղրանտի աղեղի բաժանմունքները պետք ե դարձած լինեն դեպի ձախ:

10. Փակաղակը բանալ, այդ նոնակներով կրակելու համար նշանակված փամփուշը դնել (2,9 զրամ Յ վառդի լիցքով, կճեպի խցանի փուրծով), փակել փակաղակը, հրահանը դնել պահպանիչ վոտքի վրա:

11. Նոնակը պոչի (շամփուրի) կողմից մտցնել հրացանի փողը մինչև նոնակի գեմառնելը փողաբերանի շուրթին, բուլիքը հանել յերկաթե բանալիով, վորը դրված ե լինում նոնակների հետ արկղի մեջ:

12. Հրացանը կոթով հենել գետնին այնպես, վոր կոթը վորեն ամուր բանի չհենվի, հրահանը պահպանիչ վոտքից դնել մարտական վոտքին:

13. Հրացանն ուղղելնալատակին, նրան կվաղրանտի սիջոցով պահանջված բարձրացմելով ձգանը աջ ձեռքի բժամատով, պա-

հելով մնացած մատներն ու ձեռքի ափը դեպի վայր և հետ՝ ագույցի ճակի յերկայնքին: Զգանին սեղմելով, պետք ե հետեւ, վորպեսի կվաղրանտի ցուցիչը (կամ հարվորպեսի կվաղրանտի ցուցիչը) ցույց տա ցանկալի բարձրացման անկյունը,

14. Նոնակի թոփչը հեռավորությունը կլինի մոտ 220 քայլ 45° բարձրացման անկյունով. անկյունները փոքրացնելիս և մեծացնելիս թոփչը հեռավորությունը փոքրանում է, կրակել 15°-ից պակաս և 70°-ից ավելի բարձրացման անկյունով չի թույլատրվում, վորովհետեւ առաջին դեպքում կարող են ստացվել մերժում (չգործելը): Հերկու գեպը ունենակները կընկնեն յերկու գեպը ունենակները կընկնեն յոդից շատ մոտիկ: Փափուկ հողի և կրակողից շատ մոտիկ: 45° և ձյան վրա կրակելիս պետք ե կրակել 45° և ավելի բարձր բարձրացման անկյուններով, վորովհետեւ այդ դեպքերում փոքր անկյուններով կրակելը կարող ե առաջ բերել մեծաքանակ մերժում (չգործելը):

15. Պետք ե կրակել հրացանի փողաբերանը նոնակի հետ դուրս հանելով պատ-

վարից կամ վահանից և ըստ հնարավորին  
այդ ծածկութների յետել թագնվելով:

16. Կրակողի մոտ կողմանկի մարդիկ  
չպետք է լինեն: Հրացանային նոնակներով  
կրակելու հոմար պետք է ոգտվել հետեյալ  
ազյուսակով:

Հեռավորությունը Քայլերով	Բարձրացման անկյունը
130	15°
150	20°
200	30°
220	45°
160	60°
120	75°

### ՆԱԽԱԳՈՒՇԱՅՈՒՄՆԵՐ ՀՐԱՋԳՈՒԹՅԱՆ ԺԱՄՄԱՍԱԿ

17. Նոնակը (շամփուրով) չդնել հրա-  
ցանի մեջ, մինչև փոք չեն համոզվել թե

հրահանը պահպանիչ վոտքի վրա յե դրված:

18. Գործածել միայն այդ նոնակնե-  
րով կրակելու համար նշանակված փամ-  
բուշամեր (լիցքը՝ 2,9 դրամ վառող Յ  
կծեպի խցանի փուրծով), առփրական մար-  
տական փամփուշտով կրակելիս իրացանը  
կիշռնա:

19. Նոնակները խոնավությունից  
պաշտպանել և շամփուրները (պոչերը) չը-  
ծռել:

20. Հրացանի փողանցքը հաճախակի  
սրբել նոնակներով կրակելիս:

21. Հանձնարարվում ե նմանապես  
լցնելուց առաջ նոնակների պոչերը յուղել  
հրացանի յուղով, յեթե նոնակի պոչը դժ-  
վարությամբ ե մտնում փողանցքը, ապա  
այդ նոնակով չկրակել:

22. Զբացված նոնակներով յերկրորդ  
անգամ վոչ մի զեպքում չկրակել:

23. Նոնակները հանած բուլիքներով  
վահանգավոր են, ուստի այդպիսի նոնակ-  
ները պետք ե անմիջապես սպառզուծել

կամ դնել տեղը և ամրացնել բուլիքը, ինչ-  
պես առաջ ե յեղել, նոնակը պոչով դեպի  
վայր պահած:


24. Պատահական վաղաժամ պայթյուն-  
ներից առաջացող դժբախտություններից  
խուսափելու համար, կրակողի մոտ կողմ-  
նակի մարդկիկ չպիտի լինեն:

25. Կրակելու համար նշանակված նըռ-  
նակները մեծ քանակով (50 հատից ավելի)  
մի տեղում չկուտակել և նախորոք տուփը  
չբանալ:

VII

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶԵՐՔԻ ՆՈՒԱԿ 1915  
ԹՎԱԿԱՆԻ ՏԻՊԱՐԻ F I ՄԱՐԿԱՅԻ  
(ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ)

ՆՈՆԱԿԻ ԿԱԶՄՈՒ-  
ԹՅՈՒՆԸ.



Նկար 12.  
Ցըրանսական ձեռքի նըռ-  
նակ 1915 թ. տիպարի:

## ԼՅՐԱԾ ՆԹՆՍԿՆԵՐԻ ՆԵՏՈՒՄԸ

Նոնակը նետելու համար վերցնում են աջ ձեռքը, մարդին այդ ձեռքի ափի մեջ առնելով։ Զախ ձեռքով, կամ, յեթե այդ ձեռքն ազատ չե, ատամներով հանում են պահպանիչ թասակը։ Հետո սաստիկ խփում են վառիչի արտաքին խողովակի հատակը ձախ ձեռքի տփին, կամ ծնկին, կամ վոտքի կրունկին, հրացանի ագույցին կամ մի ուրիշ պինդ առարկայի։

Եյսպիսով առաջանում է բոցավառում, իսկ 5 վայրկյան հետո նաև նոնակի պայթյունը,

Ուստի հարվածից հետո պետք է իսկույն նոնակը նետել ուր վոր հարկն ե, սակայն առանց առանձին շտապողականության,

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — Յեթե նոնակը աջ ձեռքը վերցվեց, պետք է հենց աջ ձեռքով ել նետել վոչ մի դեպքում չպետք ե ձախ ձեռքը փոխադրել։


2. Յերբեք չպետք է պայթուցիչը քանի կել նմանապես և չպետք ե հանել ով ո՞;

պահակչ թասակը, յեթե նոնակը իսկույն նետելու մտադրություն չկա։

3. Նոնակի վրա ցույց տրված դետոնա-  
տորը շատ վատ վորակի յե և անվտանգ  
չե (վաղաժամ պայթյուն և տալիս)։ Ուստի  
այդպիսի գետոնսատորներով նոնակներ զոր-  
ածածել հարկավոր չե։ Կան ուրիշ ձեկի դետո-  
ծածել հարկավոր նոնակների թվով են  
նատորներ (նրանք նոնակների թվով են  
պատրաստված), որոնք իրենց չափով յեր-  
կառ անգամ փոքր են։ Նրանց պահպանիչ  
կու անգամ փոքր են։ Նրանց պահպանիչ  
թասակը յերկաթի յե և վոչ թե սավարա-  
թասակը յերկաթի յե և պայթյունատոր-  
թը զեղթե։ արտաքին և ներքին խողովակները  
նույնպես յերկաթի յեն։ Եյս գետոնսատոր-  
ներն ավելի հարմար են և սիանգամայն  
անվտանգ։

VIII

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԵՐՔԻ ՆՈՒԱԿ,  
ՅԵՐԿԱՐ (ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ)  
ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ



1. Մարմին
2. Լիցք
3. Դետոնատոր
4. Դետոնատորի մատնոց
5. Հեռակայական բաղադրություն
6. Ստվարաթղթե զլան
7. Պատիճ
8. Քերիչ (բոցավառող հարմարանք)
9. Քերիչի ող
10. Կոթ
11. Կոթի աղուցարան
12. Նոնակը գոտու վրա կրելու կարթ:

Նկար 13.  
Գերմանական ձեռ-  
քի նոնակը, յերկար.

1. Նոնակի բաշն է—750 գրամ:
2. Լիցքի բաշն է—300 գրամ
3. Հեռակայական բաղադրության այլ-  
ման ժամանակն է  $5^{1/2}$  վայրկյան:
4. Հարվածող գործողություն ունեցող  
բեկորների թոփչքի շառավիղը հասնում է  
մինչև 25 քայլի:  
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բացի այս տի-  
պարից, կա բոլորովին նման մի նոնակ՝  
վորի քաշը սակայն 1 կիլոգրամ է. այս  
յերկորբք տիպարի հեռակայական բաղա-  
դրության այրման ժամանակը  $7^{1/2}$  վայր-  
կյան է,

ՆՌՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

5. Նոնակի մարմինը (1) իրենից ներ-  
կայացնում է թերթ-յերկաթե մի գլան,  
թերթի հաստությունը 1 միլիմետր է: Գլա-  
նի վերին հիմքում կա մի կլոր անցք, վորի  
յեղը բարձրացրած է և ներսից պտուտա-  
յակը. սրա մեջ է պտուտակվում նոնակի  
կափը. սրա մեջ է պտուտակվում նոնակի  
կոթը: Մարմնի կողքի մակերեսին կա մե-  
ամուր յերկաթե կարթ նոնակը գոտու վրա  
կը լու համար:

6. Պայթուցիկ լիցը (2) բաղկացած ե  
ուժեղ փշտող պայթուցիկ նյութից, փորը  
լցնում ե մարմնի ամբողջ ներքին խոռոչը:  
Լիցը մամլած ե և պատած յուղած ըստ-  
վարաթղթով: Մարմնի վերին անցքի մեջ  
տեղի դիմացը լիցը մեջ գլանաձև փոր-  
վածք ե պատրաստված գետոնատորի (մատ-  
նոցի) համար:

7. Կոթ (10) — փայտե, գլանաձև, զա-  
նազան տրամագծի: Ունի թափնթափ  
անցք սոնակի ուղղությամբ պատիճը (7),  
հեռակայական բաղադրությանը (6) և քե-  
րիչը (բոցավառող մեխանիզմը) (3) տեղա-  
փորելու համար: Կոթի ստորին ծայրը ունի  
յերկաթե ազուցարան, մակերեսին պտու-  
տակաձև ակոսով կոթը նոնակի մարմնի  
մեջ պտուտակելու համար: Կոթի վերին  
ծայրը կլորացրած ե և պարաֆինով ծած-  
կած, փորպեսզի կենտրոնական անցքը  
խոնավությունից պահպանվի.

ԾԱՆՈԹ. — Նոնակների մի քանի պար-  
նակ, ունի յերկաթե ազուցարան, Այս

ազուցարանին պտուտակվում ե կենտրոնա-  
կան անցքի բերանը փակող յերկաթե կա-  
փարիչը:

8. Շառաչուկ մնդիկի պատիճը անշարժ  
ամրացրած ե կոթի կենտրոնական անցքի  
ստորին յերբորդ մասում: Պատիճի միջով  
մի լար (բերիչ) ե անցկացրած, փորը ստո-  
րին մասում ոճաշարքի նման բերթ-քերթ  
ե: Այդ լարի վերին ծայրում ամրացված ե  
մի թոկ, փորի մերքը կոթից գուրս ե զա-  
լիս, նրա մակերեսույթին յեղած վաքում տե-  
ղավորվում և պարաֆինով լցվում է: Յեթե  
այդ մերքը աղատենք և նրանով լարը քա-  
շենք, վերջինս կբոցավառի պատիճը:

9. Պատիճից ներքի կոթի անցքում  
գտնվում ե հեռակայական բաղադրելյունը  
(բիկֆորդյան քուղի մի կտոր, փորը ստվա-  
րաթղթի զրանի մեջ ե պարափակված): Այս  
բաղադրությունը պատիճից բոցավառվում  
ե և կրակը հաղորդում ե դետոնատորին:  
Հեռակայական բաղադրության ծայրը պար-  
փակված ե պղնձե խողովակի մեջ, փորը  
փակված ե պղնձե խողովակի մեջ,

կոթի ստորին ծայրից  $1\frac{1}{2}$  սանտիմ. դուրս  
ե գալիս:

10. Դետոնատորը—դրվում ե նոնակի  
մեջ ներկելուց անմիջապես առաջ միայն:  
Իրենից ներկայացնում ե կարմիր պղնձե  
մի մատնոց բարձրությունը 4 սանտիմ.,  
պարունակում ե 2 գրամ շառաչուկ սնդիկ:  
Վերին բաց մասով (ուր պայթուցիկ սըն-  
դիկ չկա) դետոնատորը մտցվում ե (լցնելիս)  
հեռակայական բաղադրությունը ընդգրկող  
պղնձե խողովակի ծայրը:

## ՆՌԱԿԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՑԵՎ ՆՐԱՆՈՎ ԳՈՐԾԵԼԸ

11. Նոնակի մարմինը ձախ ձեռքով  
բռնած, աջով կոթը դուրս հանել, պտտե-  
լով ժամացույցի ոլաքին հակառակ ուղղու-  
թյամբ:

12. Նոնակի մարմինը դեն դնել և  
ձախ ձեռքով վերցնել դետոնատորը (տու-  
փից կամ փամփշտակալից): Այ ձեռքով կո-  
թը բռնած, ձախ ձեռքի մատներով դետո-

նատորը մտցնել պղնձե փողի մեջ, վորը  
կոթի կենարոնական անցքից դուրս  
ցցվում:

13. Դետոնատորը ուղղելով դեպի լից-  
քի մատնոցը, կոթը ներս պտուտակել նըռ-  
նակի մարմնի մեջ մինչև դեմ առնելը:

14. Վերցնել նոնակը աջ (ձախ) ձեռ-  
քը նետելու համար. ուսը յետ ձգել, նոնա-  
կը պահելով ազգըի մոտ. նույն ըոպեյին  
մյուս ձեռքի մատներով դուրս քաշել քե-  
րիչը և նոնակը նետել դեպի նպատակը:


ԾԱՆՈԹ.—Այս նոնակները շատ լավ  
գորակի յեն չպայթելու դեպքերը  $5^0/0$ -ից  
ավելի չեն:

## IX

**ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԵՐՈՒԹԻՒՆՆԱԿԱԿԱՐ  
ԿԼՈՐ (ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ)**

ՆԹՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Լցրած նոնակի քաշն և մոտ 800  
գրամ (2 ֆունտ):



Նկար 14.

Քերմանական ձեռքի նոնակի կլոր:

2. Պայթուցիկ լիցքի քաշն և մոտ 100  
գրամ:

3. Հեռակայական բաղադրության այլ-  
ման ժամանակն է 7 վայրկյան:

4. Բեկորների թոփչքի շառավիղը հաս-  
նում է սինչե 300 քայլ:

ԳՈՐԾԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ

5. Վերցնել ծեփող ժապավենը հեռա-  
կայական փողակի ստորին ծայրից:

6. Դուրս հանել նոնակի ծակից ցին-  
կե վռանը պատւածակիչի միջոցով (ըռողի  
զամիկի վրայի):

7. Հեռակայական փողակը մատներով  
բռնած մտցնել նոնակի ծակի մեջ, այդ մի-  
ջոցին բռնելով փողակի զլիսից և վոչ թե  
քերիչի ունկից:

ՆԵՑՈՒՄԸ

8. Նոնակը վերցնել աջ ձեռքը, իսկ  
քուղը ձախ ձեռքը կեռից բռնած:

9. Քուղն իր կեռով հազցնել քերիչի  
ունկը:

10. Վերցնել ձախ ձեռքով գասիփից և  
ձախ ձեռքի սասակիլ շարժումով դուրս քա-  
շել քերիչը նոնակից:

11. Նետել նոնակը ցանկալի ուղղությամբ, բուծինը բոցավառվելու 7 վայրկյան հետո տեղի յե ունենում նոնակի պայմանը:

**ԾԱՆՈԹ.** — Քերիչը դուրս քաշելու համար գործածում են մի քուղ, վոր իր մի ծայրում կեռ ունի, իսկ մյուսում գամիկ պառւտակիչով: Հատուկ քող չունենալու պատճառով ցինկե վահները յետ պառւտել կարելի յե հրացանի պառւտակիչով կամ սվինով: Քերիչը դուրս քաշել կարելի յե նրա ունկը շամփուրի գլխին, հրացանի փոկողին և այլն ձգելով:

### ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

12. Քերիչը դուրս քաշելիս աջ ձեռքի մատները, այրվածքից խուսափելու համար, չպետք ե լինեն գազերը դուրս գալու խողվակի կողքի անցքի դիմացը:

13. Քերիչը դուրս քաշելուց անմիջապես հետո, նոնակը պետք ե նետվի:

14. Նոնակի բեկորները թույում են 150—200 քայլ դեպի չորս կողմը, ուստի նոնակով պետք ե ոգտվել ծածկույթի յետեցից կամ նետելուց հետո պետք ե պառկել:

15. Նոնակները կրել ներս դրած խովակներով արգելվում ե:


### X

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶԵՌՎԻ ՆՈՆԱԿ ԼԵՄԱՆԻ ՍԻՍՏԵՄԻ (ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ)

### ՆԹՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Լցրած նոնակի քաշն ե մոտ 600 գրամ:

2. Պայթուցիկ լիցքի քաշն ե — 125 գրամ:



Նկար 15.  
Լեմանի անգլիական  
ձեռքի նոնակ:

3. Հեռակայական բաղադրության այլքաման ժամանակն է 4—5 վայրկյան:

4. Բեկորների թոփչքի շառավիղը—  
100—150 քայլ:

5. Նոնակների ձեր լինում ե կլոր և  
ձգածկ, հարթ և քերթերով:

### ԳՈՐԾԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

6. Կապել ձախ ձեռքին տախտակը  
(կամ ժապավենը) կարմիր լուսածինով  
(թաթի և արմունկի միջև):

7. Զննել, թե մաքուր և արդյոք խողովակը նոնակի կափարիչի մեջ.

8. Բուծինը վերցնել և դնել նոնակի կափարիչի պղնձե խողովակի մեջ մինչեւ խողովակի տակին առանց ուժ գործադրելու դեմ առնելը:

9. Կափարիչին ամրացրած պղնձե լարի ծայրերը փաթաթել բուծինի շուրջը նըա գլխատակին, մի ծայրը՝ մի կողմը, մյուսը՝ մյուս կողմը:

ԾԱՆՈԹ. — Լարով ամրացնել դետոնա-  
տորը գլխատակին շատ անհարժար ե: Ուս-

տի ավելի լավ են այն գետոնատորները,  
վորոնց լարերը զլիսի վրա յեն (այդ գետո-  
նատորները զլիսներին արձնե թասակներ  
ունեն): Այն ժամանակ դետոնատորի լարե-  
րը կազմվուծ են նոնակի լարերի հետ և  
այդպիսով ստացվում ե ամուր կտոր:

### ՆԵՏՈՒՄԸ

10. Նոնակը վերցնել աջ ձեռքը:

11. Զախ ձեռքով կամ ատամներով  
ժապավենի ազատ ծայրից բռնած հանգիստ  
պոկել այն բուծինի գլխից, այն ժամանակ  
քերելու բաղադրությունը կբացվի: Յեթե  
բուծինի ոլրա արձնե թասակ կա, վերցնել  
այն:

12. Նոնակը աջ ձեռքով բռնած, քե-  
րելու բաղադրությունը քսել տախտակին  
(կամ ժապավենին), վոր կափած և ձախ  
ձեռքին, այդ միջոցին աջ ձեռքի մասներով  
բուծինը պետք ե պահել գլխից և կողքե-  
րիցը: Տախտակ չեղած կամ փշացած ժա-  
մանակ, կարելի յե ոգտվել սովորական  
լուցկու տուփով:

13. Անմիջապես նետել նոնակը ցան-  
կալի ուղղությամբ:

### ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ


14. Քերելու բաղադրությունը տախ-  
տակին քսելուց հետո յերբեք նոնակը ձեռ-  
քում չպահել:

15. Նոնակը կրել բուծինը մեջը դրած  
արգելվում ե:

16. Առանց կարիքի բուծինի զլիսին  
ժաղավենին ձեռք չտալ, վորովհետև քերե-  
լու բաղադրությունն արագ խոնափանում ե:

17. Նոնակները պետք ե նետել ծած-  
կարանների յետեից կամ պառկել նետելուց  
հետո, վորովհետև բեկորները թռչում են  
չորս կողմը մինչև 100—150 քայլ:

## XI ԶԵՐՓԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՐՆԱԿ 1917 ԹՎԼԻ ՏԻՊԱՐԻ ՆՐՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նկար 16.  
Զերփի քիմիական նոնակ  
1917 թվի ամսարի

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Մարմին
- 2) Կափարիչներ
- 3) Զագար
- 4) Կոթ
- 5) Թիթեղյա շրջանակ  
վար փակում կ կափա-  
րիչ օ անցըը
- 6) Զարկան
- 7) Զարկանի կոթառ
- 8) Մարտական զապանակ
- 9) Հրանան
- 10) Ուղղիչ կոթառ 2 ա
- 11) Բուլիք
- 12) Յետքաշիկ ա ապուռով
- 13) Յետքաշիկ սոնակ
- 14) Յետքաշիկ զապանակ
- 15) Պանականիչ ող
- 16) Հենարան
- 17) Խեղղիչ հեղուկ
- 18) Բուծին
- 19) Բախական պատիճ
- 20) Դարձուցակ
- 21) Հեռակայական փողակ
- 22) Պատիճ-դետոնատոր
- 23) Պատրույգ
- 24) Նոնակի հատակը
- 25) Կրելու կարթ
- 26) Կոթի հատակը

1. Նոնակի քաշն և 850 գրամ
2. Խեղդիչ բաղադրության քաշը 550 գրամ:

3. Այս նոնակի կառուցվածքի մանրամասնությունը կտտարելապես նույնն է, ինչ զոր 1914 թվի տիպարինը. Նետումը նախապարաստելու կանոնները՝ նույնպես: Միայն պայթուցիկ լիցքը փոխարինված ե խեղդիչ բաղադրությամբ:

#### ՆՈՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

4. Նետված նոնակում 4 վայրկյան անցնելուց հետո պայթում ե պատիճ-դետոնատորը, նոնակի մարմինը բացվում ե և խեղդիչ հեղուկը, ցնդվելով անկման վայրում, արագ գոլորշիանում ե:

5. Նոնակը լցնող հեղուկի գոլորշիների հատկությունն ե աչքերը և շնչառության որդանների լորձաթաղանթը զբգութը, զորի հետևանքով այն գետնատան կամ բլինդաժի մեջ, ուր նոնակ ե ձգված, առանց հակադագի մնալ չի կարելի, մարդս համակվում

ե անդիմադրելի հազով, վորը փոխվում ե սիրաը հետ տալու, աչքերը կսկծելուց թափող արտասուրը արգելում ե վորեւ բան տեսնել: Այդպիսի մթնոլորտում 10—15 րոպե մնալը առողջության լուրջ ֆաս և պատճառում, զոր կարող ե մահով վերջանալ:

6. Նոնակի ներգործությունը բախրամատներում, մանավանդ քամու ժամանակ ավելի թույլ ե, սառնամանիքը նույնպես թուլացնում ե նոնակների ներգործությունը. այդ պատճառով 10 աստիճանից ավելի սառնամանիքի ժամանակ նրանից չպետք ե ոգտվել:

7. Նոնակի պատճական պայթյունի դեպքում պետք ե աչքերը փակել (աչքերի շփումը միայն ուժեղացնում ե զրգութիւներգործությունը), շնչառությունը պահել նոնակից հեռանալ հողմաբեր կողմը կամ հագնել հակադագ:

## ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

8. Նոնակների արկղների բացումը \*), ինչպես և նոնակների զննությունը կատարել բացովյա մոտն ունենալով հակագաղեր:
9. Ցեթե արկղը բանալիս տարածվի ուժեղ հոտ, վորը աչքերը և կոկորդը գըրդում ե, անհրաժեշտ է հակագաղ հագնել:
10. Նոնակները հին շորով սրբել և ջոկել իբրև անպետք այն նոնակները, վարոնցից հեղուկ ե հոսում:
11. Անսարք ինչպես և վնասված նըռնակները գործադրելու չհանձնել, այլ հորել գետնի մեջ վնչ պակաս քան 1 մետր (1,5 արշին) խորության վրա:

\* ) Նոնակների խցանվածքը պետք ե պահապնել փչացումից և գատարկելուց հետո հանձնել թիկունքը:

ՀԱՎԵԼՎԱԾ

## ԿԱՆՈՆՆԵՐ

### ԶԵՌԻՖԻ ՅԵՎ ՀՐԱՅԱՆԱՅԻՆ ՆՈՆԱԿՆԵՐԸ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ

1 Խաղաղ ժամանակ զորամասում յեղած նոնակների ամբողջ պաշարը պետք ե պահել հատուկ պահեատում, վորը պիտի գտնվի զինապետի տրամադրության տակ: Վաշտերում (հեծելավաշտերում, զորախըրմբերում) կարող են գտնվել միայն վարժական նոնակները:

ԾԱՆՈԹ.—Հրաձիգ դնդի լրիվ կոմպլեկտը կազմում են 3000 ձեռքի և 3000 հրացանային նոնակները, ընդամենը 125—150 փութե:

2. Պահելիս պետք ե զեկագարվել ներքո՞ի շահագում գատարկելու դրություններով՝ ա) Նոնակները, մեծ քանակությամբ

պահելու ժամանակ, հանդիսանում են չափազանց վարանգավոր մթերք: Նըանք կարող են պայթել՝ 1) կրակից, 2) սաստիկ հարվածից, մանավանդ յերկաթով, 3) փոխագարձ շփումից և ցնցումից և 4) յերկարատև թափահարումից (որինակ վարդով սալահատակի վրա յերթալուց):

բ) Յերկար պահելուց, մանավանդ խռավության մեջ, նոնակների պարունակությունը փչանում (տարրալուծվում): Ե, իսկ նոնակների բարակ մետաղե մասերը ժանգն ուտում ե: Փչացած նոնակներից վտանգը ուժեղ կերպով մեծանում ե՝ պայթյունը կարող ե առաջ գալ չնչին, դժվար վերացնելի պատճառներից:

գ) Ամենից ավելի վտանգավոր են դեռնատորները, ապա և հրացանային նըանակները (վորոնց գետոնատորները ներսից ե): Զեռքի նոնակները, քանի դեռ չեն լցված և չեն փչացած, ինքնըստինքյան միանգամայն անվտանդ են, սակայն դեռնացիայից (հարեան տեղում յեղած պայ-

թյունից) կարող են նըանք ել պայթել:  
դ) Առանձին նոնակներ, վորեա մեկի ձեռքը հանձնված ժամանակ, հարկ յեղած գննման և հմուտ վերաբերումնքի պայմանակը, վոչ մի վատանդ չեն ներկայացնում: Սակայն գետոնատորների նկատմամբ նախազգուշացնումներ անհրաժեշտ են նաև ձեռքերին պահած ժամանակ:

3. Գնդի նոնակային պահեստը, յեթե նա մշտական ե, (պետք ե իրենից ներկայացնի ամուր աղյուսե կամ քարե նկուղ, յավ վենտիլացիայով, բավականաչափ նոր, լավ վենտիլացիայով, բավականաչափ լույս, շանթարգել ունեցող և հրդեհից աւապահովված): Նըա հեռավորությունը բնակելի տեղերից և սովորական ճանապարհներից պետք ե լինի վոչ պակաս քան 100 ներից պետք ե լինի վոչ պակաս քան 500 մետր: Պահեստը ըիտի պակաս քան 500 մետր: Պահեստը կամ պահանձի ժամանակներով վասողի պիտի պահպանվի ժամանակներով վասողի պահպանատների հետ ընդհանուր հիմունքներով:

Նոնակները վառողի պահեստներում

պահելը այն միջոցին, յերբ այնտեղ վառող կա, խստիվ արգելվում է:

Փամանակավորապես պահեստ կարող ե ծառայել յուրաքանչյուր շենք բացի ծղոտով ծածկվածները, այն պայմանով վորվերը հիշված մյուս պայմանները պահպանվեն:

4. Հրացանային, ձեռքի նոնակները և դետոնատորները պետք ե տեղավորվեն պահեստում յերեք առանձին տեղում, վորոնք պետք ե իրարից բաժանված լինեն ազյուսե (բետոնե) միջապատերով և մետր հաստությամբ:

Փամանակավոր պահեստում միջապատերը կարող են լինել կրկնակի փայտե, մեջտեղը վոչ պակաս քան կես մետր ավագի շերտով:

5. Նոնակներն ու դետոնատորները պահվում են միշտ արկղներում, հատուկ խցանված, ըստ հնարավորության հերմետիկ: Արկղներից հանված նոնակները (զընսության ժամանակ), հանձնումից հետո և

այլն) նորից դարսվում են ազատ արկղեմ:

6. Արկղները տեղավորվում են առանձին, լաստանների կամ հենարանների վրա, վոչ մի դեպքում հատակին: Պարտադիր են վենտիլյացիայի համար արանքներ և ամեն մի արկղը ազատ դուրս բերելու համար անցըեր: Ծախսման յենթակա արկղները դրվում են առանձին:

7. Արկղները դնելու, զննելու և դուրս բերելու ժամանակբոլոր շարժումները պետք ե զգույշ, սահուն և փափուկ լինեն: Վայր ձգելը, հրելը, հատակի վրա քաշ տալը և այլն թույլ չպետք ե տալ: Ցեղեց արկղը ծանր ե կամ տեղափոխելու համար անհարմար, պետք ե ուժովել խարակներով: Արմար, պետք ե ուժովել խարակներով:

Կղները բանալ կարելի յե միայն պահեստից դուրս:

8. Պահեստին պետք ե կանոնավոր դիտողություն լինի: Վոչ պակաս քան այսից մենքամ բոլոր արկղները պետք ե զննել մի անգամ բոլոր արկղների պահպանից և արհատուկ հանձնաժողովների միջոցով և արհատուկ հանձնաժողովների միջոցով և

ձանագրություն կազմել։ Զննության միջոցին վոչ հերմետիկ խցանվածը բացվում է և պարունակությունը ըննվում է առաջին պատճառած որինակով։ Հերմետիկ խցանվածը բացվում է միայն այն դեպքում, յեթե փշացած է կամ ուռած պատեր ունի, այդ նշան ե, վոր ներսում տարրալուծում է կատարվում։

9. Այն նոնակներն ու դետոնատորները, վորոնք հանձնաժողովը գտնում է, վոր պահելու համար վտանգավոր են, պետք է իսկույն առանձնացվեն և հանձնաժողովի վորոշումից վոչ ուշ քան հինգ որ հետո պետք ե վոչնչացվեն պայմենական միջոցով։

10. Վարժական հրաձգությունների և նոնաձգության համար նոնակները պետք է տեղ հասցվեն պահեստից արկղներում ուղղակի հրաձգարան զինապետի կարգադրությամբ։ Տեղափոխությունը կարող է կատարվել սովորական սայլերով։ յեթե քանակով շատ են՝ հրացանային նոնակները պետք է բաժանվեն ձեռքի նոնակներից

(իրենց դետոնատորներով)։ Արկղները դետոնատորներով խնամքով փաթաթվում են խսիրով կամ մի ուրիշ բանով ցնցումները խափկացնելու համար։ Վարդով աեղափոխումը չի թույլատրվում։

11. Յերթի, պատերազմի ժամանակ, նոնակները սահմանված քանակով հանձնում են հրածիդների ձեռքը։ Գումակում զինապետը կը ունի միայն պահեստի կոմպլեկտը, իսկ ձեռքի նոնակները, հրացանային նոնակները և դետոնատորները պետք է աեղափորված լինեն առանձին սայլերում։ Արկղները ծածկվում են բըեզենով և ամուր կապվում են, վորպեսզի չքսվեն և իրար չկալչեն։ Դետոնատորներով արկղները փրաք չկալչեն։ Պետուատորներով արկղները վորեւել պահով են պատում (ձիլոսը հարգ, ճյուղեր և այլն)։

12. Վարդով և սալահատակած ճանապարհներով փոխադրելուց պետք է հնարավորին չափ խուսափել։ Յեթե այնուամենակով շափ խուսափել, Յեթե այնուամենակով, հարկավոր ե խճուղով շարժել, նայինիվ, հարկավոր ե խճուղով շարժել։ Վերաբաժն յեղբերով քշել։ Գիշերովի պետք է չքարած յեղբերով քշել։

և հանգստի ժամանակ նոնակներով սայլերը  
դրվում են մնացած գումակից զատ, պահ-  
պանության ներքո, խնամքով պահպանելով  
(քողարկելով) վերերկրյա և ողային ռմբա-  
կոծությունից և գնդակոծումից:

13. Մարտիկների ձեռքը հանձնված  
նոնակները պետք ե կրել հատուկ նոնակա-  
յին պայուսակներում կամ պարկերում, վո-  
րոնք պետք ե ունենան դետոնատորը տե-  
ղափորելու համար առանձին գրպաններ։  
Մի պայուսակում նոնակների թիվը պետք  
է լինի 4—6։

Մաստիկ ցնցումներից և հարվածներից  
պետք ե խոռսափել, վորպեսզի նոնակները  
չփշանան և դետոնատորները չպայթեն։

---

## ԲԱՌԱՅՈՒՑՈՒՅՆԿ

Ագուցարան օправа

Ալյումինե ալյումиневый

Ակ օչկօ

Ականց, ակնկալ բուլка

Ակոսիկ бороздка

Ամմոնալ аммонал

Անրիկ хомутик

Ազուր զацеп

Ասել боек

Արձե свинцовый

Արույրե латунный

Ափսե тарель

Բախական փողակ, պատիճ ударная трубка, кап-  
սюль

Բացվածք отверстие

Բեկորներ осколки

Բիկֆորդյան քուզ бикфордов шнур

Բոցավառող մեխանիզմ, հարմարանք воспламе-  
ниющий механизм, приспособление

Բուլիք чека

Բուծին стопин, տ. պատրույդ

Գագաթնահար կրակ навесный огонь  
 Գլան цилиндр  
 Գլանձկ цилиндрический  
 Գլուխ головка  
 Դարձուցակ завертка  
 Դռնակ дверца  
 Զարկան ударник  
 Զննություն осмотр  
 Զուպանակ մարտական, դաշրուն пружина боевая, спиральная  
 Թասակ колпак, колпачек  
 Ժապավեն лента  
 Լիցք заряд  
 Լծակ рычаг  
 Լցնելը заряжание  
 Խեղիչ հեղուկ удушающая жидкость  
 Խոտորնակի поперечный  
 Խցնում укупорка  
 Ծայրապանակ наконечник  
 Ծանրոց грузик  
 Ծխառու վառոդ дымный порох  
 Ծխնի шарнир  
 Կատար гребень  
 Կարթ крючок  
 Կափարիչ крышка  
 Կեռ крючек

Կոթ рукоятка  
 Կոթառ муфта  
 Կվագրանտ квадрант  
 Կորուն прорезь  
 Կրկնահատակ поддон  
 Հապաղիչ замедлитель  
 Հատակ дно  
 Հատիկ мушка  
 Հենարան упор (ционная трубка, состав  
 Հեռակայական փողակ, բազադրություն дистан-  
 Հրածակ запальное отверстие  
 Հրահան курок  
 Հրապատիճ (փոքր) капсюль (малый)  
 Հրապատիճ-գետնատոր капсюль-детонатор  
 Հրասանդիկ мортирка  
 Զագար воронка  
 Ճայթիչ առ. գետնատոր  
 Ճիտ шейка  
 Մազաղթ пергамент  
 Մանեկ гайка  
 Մաստիք мастика  
 Մատնեք желобок  
 Մատնոց наперсток  
 Մարմին корпус  
 Մելինիտ мелинит  
 Միացնող соединительный

**Յեղաշեկ** оттяжка  
**Յերկայնակի** продольный  
**Յերկթևանի** двухперый  
**Յերկճիղ** вилка  
**Եիշ** наметка (ручная)  
**Նոնակ հրացանային, ձեռքի** граната ружейная,  
**Նոնակակիր** подносчик гранат  
**Նոնածիգ** гранатометчик  
**Շամփուր** шомпол  
**Շառաչուկ սնդիկ** гремучая ртуть  
**Շուրթ** срез  
**Ոբայուրատոր** обтиратор  
**Ողակ** кольцо  
**Ողակածկ** кольцевой  
**Պահունակ** обойма  
**Պահպանիչ** предохранитель  
**Պահպանիչ բուլիք** предохранительная чека  
**Պայթուցիկ** разрывной  
**Պայթուցիչ** взрыватель  
**Պատիճ** пистон  
**Պատուհան** окно, окошко  
**Պարույգ** стопин, ш. рукоятка  
**Պիստոն** пистон  
**Պատկ** венчик  
**Սարքելը** сборка  
**Աղմիչիչ** зажимной

**Մեղմվածք** обжим  
**Սկավուակ** диск  
**Սոնակ** ось  
**Սվինի փողակ** штыковая трубка  
**Ստվարաթղթե** картонный  
**Վայրիջույց մեխանիզմ** спусковой механизм  
**Վառողի փոշի** пороховая мякоть  
**Վարող յելուն** ведущий выступ  
**Վաք** жолоб  
**Վերածուիկ** прилив  
**Վոտք մարտական, պահպանիչ** взвод боевой,  
**Տափղակ** шайба (предохранительный)  
**Տետրիլ**  
**Տրամալար-ցուցիչ** отвес-указатель  
**Ցուցիչ խաղ** указательная черта  
**Փշտոպ նյութ** дробящее вещество  
**Փող** ствол  
**Փողարենի շուրթ** дульный срез  
**Փողակ** трубка  
**Փու** углубление  
**Քանդելը** разборка  
**Քերիչ** терка  
**Քերելու բաղադրություն** терочный состав



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<p><b>I.</b> ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . .</p> <p>Նոնակի մարտական հատկությունները . . . . .</p> <p>Նոնակի կազմությունը . . . . .</p> <p>Հրասանդիկ . . . . .</p> <p>Կվաղբանոտ . . . . .</p> <p>Նոնակների յեվ հրասանդիկների խցանումը յեվ զննությունը . . . . .</p>	<p>Եջ . . . . .</p> <p>5</p> <p>7</p> <p>19</p> <p>21</p> <p>23</p>
<p><b>II.</b> 1914 ԹՎԻ ՏԻՊԱՐԻ ԶԵՐՔԻ ՆԹՆԱԿ . . . . .</p> <p>Նոնակի մարտական հատկությունները . . . . .</p> <p>Նոնակի կազմությունը . . . . .</p> <p>Նոնակը լցնելը . . . . .</p> <p>Նոնակով գործելը . . . . .</p> <p>Նոնակների խցանումը յեվ զննությունը . . . . .</p>	<p>27</p> <p>28</p> <p>40</p> <p>44</p> <p>45</p>
<p><b>III.</b> ՄԻԼՍԻ ՍԻՍՏԵՄԻ ՆԹՆԱԿ . . . . .</p> <p>Նոնակի մարտական հատկությունները . . . . .</p> <p>Նոնակի կազմությունը . . . . .</p> <p>Բոցավառող մեխանիզմի քանդելը յեվ սարքելը . . . . .</p>	<p>51</p> <p>52</p> <p>62</p>

<p><b>IV.</b> ԶԵՐՔԻ ԾԱՆՐ ՆԹՆԱԿ ՖՈՒԳԱՍՍՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԱՎԻՑՈՒՅԻ ՅԵՎ ՖՅՈՒՇՈՐՈՎԻ ՍԻՍՏԵՄԻ . . . . .</p> <p><b>V.</b> 1914 ԹՎԱԿԱՆԻ ՏԻՊԱՐԻ ԶԵՐՔԻ ՆԹՆԱԿ ՖՈՒԳԱՍՍՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՅԻՉ ԼԻՑԲՈՎ . . . . .</p> <p><b>VI.</b> 1915 ԹՎԻ ՏԻՊԱՐԻ ՀՐԱՑԱՆԱՅԻՆ ՆԹՆԱԿ (ՃԱՄՓՈԽՄԱՎՈՐ) . . . . .</p> <p>Հիմնական տվյալներ . . . . .</p> <p>Նոնակի մախանիզմի գործողությունը . . . . .</p> <p>Նախապատրաստություն ծիգի համար յեվ հրածգություն նոնակով . . . . .</p> <p>Նախազգուշացումներ հրածգության ժամանակ . . . . .</p> <p><b>VII.</b> ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶԵՐՔԻ ՆԹՆԱԿ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՏԻՊԱՐԻ F ՄԱՐԿՈՅԻ (ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ) . . . . .</p>	<p>72</p> <p>75</p> <p>77</p> <p>79</p> <p>79</p> <p>79</p> <p>82</p> <p>85</p> <p>86</p>
<p><b>VIII.</b> ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԵՐՔԻ ՆԹՆԱԿ, ՑԵՐԿՎԻ (ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ) . . . . .</p> <p>Հիմնական տվյալները . . . . .</p>	<p>88</p>

Նոնակի կազմությունը . . . . .	89
Նոնաժի նախապատրաստումը յեկ նրանով գործելը . . . . .	92
I. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԵՌՔԻ ՆՌՆԱԿ, ԿԼՈՐ (ՊԱՇՏ ՊԱՆՈՂԱԿԱՆ) .	
Նոնակի կազմությունը . . . . .	94
Գործելու նախապատրաստությունը .	95
Նետումը . . . . .	95
Նախազգուշական միջոցներ . . . . .	96
II. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶԵՌՔԻ ՆՌՆԱԿ ԼԵՄՍՆԻ ՄԻԱ ՏԵՄԻ (ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ) .	
Նոնակի կազմությունը . . . . .	97
Գործելու նախապատրաստությունը .	98
Նետումը . . . . .	99
Նախազգուշական միջոցներ . . . . .	100
XI. ԶԵՌՔԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՌՆԱԿ 1917 ԹՎԻ ՏԻ ՊԱՐԻ:	
Նոնակի կազմությունը . . . . .	101
Նոնակի մարտական ներգործությունը	102
Զենության կանոնները . . . . .	104
Հավելված: Կանոններ ձեռքի և հրա- ցանային նոնակները դորակա- սերում պահելու:	105
ԲԱՌԱՑՈՒՑԱԿ	113



